Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18940

Խաչ-Սարգս

891.99
Ղ-31

Թիֆլիս
1890

891.99
ob-31
№ 195

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

ф-33

ԽԱԹ-ՍԱԲԱ

(հայ քոչաների կեանքից)

№ 2632
211
495

(Արտատպած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

№ 2632
Центральная библ-ка им. Ленина
гор. Баку
ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.
№

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
1890

4394

Дозв. ценз. Тифлисъ. 24 Сентября, 1890 г
Типогр. М. Д Ротиніанца на Голов. пр. соб д. № 41.

501
41
2003

995
681
№ 2632
№ 1632

ԽԱԹ-ՍԱԲԱ

(ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ)

Ա.

№ 2632

ԶԻՒԻՆԻ ԴԻՒԶԸ

Զանգաղ գիւղից մի քանի ժամ հեռաւորութեամբ, Զիւլինի լեռների [1]) մէջ գտնւում է մի հրաշալի սարահարթ, որտեղից Զանգազի փոքրիկ գետը ցատկռտելով լերկ ժայռերի վրայից, սողալով ապառաժների բացւածքների միջից, իւր փրփուրով ծածկում է լեռնադաշտը կտրող գիներբուկների գիծը և գնում գահավիժում է Զանգազի հովիտը, ուր նա ոռոգում է պարարտ ծաղկալից դաշտեր։

Այնտեղ-բարձրում սարահարթը մի ծայրով միանում է բլրակների, որոնք ծածկւած են երփներանգ ծաղիկներով և որոնք թիւին են տալ աւելի բարձր, լերկ ժայռերով հարուստ և խոր ծործորներով ակոսւած լեռների. իսկ սոցա ետևից, Զիւլինի լեռնաշղթան տեղ տեղ դուրս է պարզում իւր ձիւնապատ բարձր գագաթները։

---

[1]) Այդ լեռները գտնւում են Կարսի և Էրզրումի միջավայրում և կազմում են ռուսաց և տաճկաց սահմանը։

Սարահարթի միւս ծայրը գալիս հանգում է դէպի ձորակը և այդտեղ կազմում է մի ահեղ գահաւանդ, որտեղից տեսնւում է դէպի ցած վիժող դետակի փրփուրը, իսկ հեռու-ցածում՝ օձապտոյտ արծաթափայլ գետակներ և վտակներ, որոնք միմեանց կորում և թաղնւում են պարարտ արտերի, կոյտ կոյտ օբաների և ամրութիւններով զինուած բլրակների մէջ...

Սարահարթը շատ մեծ չէ, բայց բնութիւնը իւր բոլոր գեղեցկութիւններով զարդարել է նորան. այդտեղ կարելի է տեսնել ապառաժների վայրենի շեղջեր, միմեանց վերայ կարծես մաղով կռթնեցրած հսկայական ժայռեր. փոքր ինչ հեռու մի վճիտ վտակ, որը կիսալուսնաձև սողում-անհետանում է շուշանների, կակաչների, անթառամների միջով։ Մի կողմում ամպի պէս սփռուած զանազան բարձրութեամբ բլրակներ ալեձև գնում են դէպի խորը, բարձրանում դէպի լեռները, յետոյ նորէն դէպի աջ են ծռւում և հետզհետէ մանրանալով հաւասարւում են դաշտի հետ... մի այլ կողմում երկու վերևից հոսող ջրվէժներ եռանկիւնաձև միմեանց կորում՝ գոյացնում են փրփրադէզ շաղրւան, որոյ ցատկռտող կաթիլները թրջում-ոռոգում են չորս կողմը վխտացող անուշահոտ ծաղիկների թերթիկները...

Այդ սարահարթը կոչւում է «Ձիւինի դիւզ»։ Շատ քիչ անգամ շրջակայ կանայք մտնում են

հաւաքելու Ձիւինի դիւզի առատ խինձը, սիբեղը, կովու ճակտեկը... հովիւը իսկ դժւարութեամբ է համաձայնւում նախիրը այն կողմը քաշելու, թէև հօտը մեծ ճարակ կը գտնի այնտեղ... Որովհետև Ձիւինի դիւզը բնակութիւններից բաւական հեռու է և եթէ շրջակայ լեռների մէջ թափառող քիւրդ կամ աջէմ աւազակները իմանան, որ նախիրը կամ կանայք այցելում են Ձիւինի դիւզին՝ մի բոլէ չեն վարանիլ խումբերով յարձակում գործելու։

Բայց, ամառնամուտի մի գեղեցիկ երեկոյ, դաշտից կարելի էր տեսնել սարահարթից բարձրացող ծուխի սիւնակներ և փալփլող լոյսեր...

Այդ օրը հեռու տեղից գալով, մի թափառական ժողովուրդ ինչևանել էր սարահարթում, կառուցել էր քսանի չափ վրան և աւելի քան յիսուն զանազան տաւարներ բաց էր թողել արածելու բլրակների մէջ։

Վրանները կառուցած էին միմեանցից հինգ քայլ հեռու։ Նոցա առջևում խոտերի մէջ թաւալում էին կեղտոտ կիսամերկ մանուկներ, մի այլ կողմում տգեղ և սև դէմքով կանայք կրակը վառել՝ կերակուր էին պատրաստում, իսկ այդ աղօտ լոյսի տակ վտակի եզերքին մի փոքրիկ պառեկի [1]) վերայ թիկն տալ, մէջքի վերայ պառկել և նստել էին 10—15 զանազան հասակի տղամարդիկ։

---

[1]) Սարի կամ բլուրի կուրծք։

Ամենքն էլ կիսամերկ էին, պատառոտուն հագուստներով, սևացած դէմքով և համարեա բոբիկ ոտներով։ Ոչ մէկը նոցանից չունէր առանց կարկատանի վերարկու, կանոնաւոր արեւ կամ գոնէ դլխարկ. մազերը խռիւ դիզացած դլխների վերայ, մօրուքները թանձր և կոշտ կամ խանձուած մազերի պէս եկած. նոյն իսկ կանայք և մանուկները բոբիկ, անլուայ, երկար մազերով և իրանց մարմնի մի մասը քուրչերով միմիայն փաթաթած...

Բոշաների մի խումբ էր, որ Թորթումից գալով, իրանց ճանապարհորդութեան տասներորդ գիշերը անցկացնել էր ուղում Զիւլինի դիւղի վերայ. ամբողջ խումբի մէջ պառեկի վերայ նստոտած տղամարդիկը միայն ներկայ էին. մնացածները կամ յետ էին մնացել կամ քաղաքումն էին և կամ շրջակայքներում պահպանութիւն էին անում։

Այն պառեկը, որի վերայ հաւաքել էին տղամարդիկ՝ նայում էր դէպի դաշտը և վտակը փալփլելով լուսնի լոյսի տակ՝ գալիս շոշափում էր նորան ուցած վազում։ Մի քանի քայլ հեռու մի տղամարդ յենել մի հին հրացանի վերայ լուռ խօսողներին էր լսում, նորա ոտների մօտ, թաթերի վերայ գլուխը դրել նստել էր մի ահագին գամփռ, որը ականջները սրել, աչքերը պլշել՝ չորս կողմն էր դիտում։

Միւսները ևս լսում էին իրանց միջից յաղթանդամ և կոշտ գծագրութեամբ հասակաւոր մէկիս, որը խօսում էր յուզմամբ, անդադար ցուպը և ձեռքերը շարժում էր և երբեմն իսկ ցուպով ճղփացնում էր ջուրը կամ դէպի օդը թռցնում արմատախիլ արած խոտերի մի փունջ...

Մի զով քամի գալիս շարժում էր խոտերի և ծաղիկների ծայրերը, օրօրում էր պատմողի թանձր մազերը և գնում սփռւում էր դէպի դաշտը...

Բ.

ԼՈՄ-ՀԱՍԱՆ

Բոշան պատմում էր։

«Հեռու-միւսիլմանների երկրում, պատմում էր նա—այնտեղ, ուր արևի մէջ հաւկիթը իսկոյն եփւում է, ուր մի ընդարձակ աւազի անապատ բռնել է երկրի կէսը, ուր մարդիկ բոլորը արևից սևացել են և ուր բուսնում է արմաւը և ձիթենին՝ կայ մի գեղեցիկ միւսիլմանի քաղաք, որից անապատը շատ մօտ է։

Այդ քաղաքում ապրում էր Շէյխ Սադօն, որին բոլոր ճանաչում էին, որովհետև նորա պալատի մէջ ոսկին քարի կտորների պէս սփռւած էր ամեն կողմ, հուրիները աւելի շատ և աւելի գեղեցիկ էին, քան նոյն ինքն Խըդիւի հարէմի կանայք. նորա պալատը բռնում էր քաղաքի կէս մասը, նորա պարտէզների պէս պարտէզներ չը կային և Շէյխը վայելում էր ցս աշխարհում ա՛յն բոլորը, ինչ որ խոստացել է մարգարէն միայն միւս աշխարհում...

Փող ունէր և նորա զօրութեամբ կարողանում էր անել ցանկացածը, վայելել այնպիսի հաճոյքներ, որոնցից Աստուած զրկել է մեզ և շատերին։ Օրեայ ամեն ժամերին լսւում էր նորա շքեղ պալատի աշտարակներից նւագածուների ձայներ. երգում էին ամենից լաւ երգողները. նորա դրան էր մօտենում ամենից առաջ դէրվիշը և խփում էր վրանը [1]. նորա մօտ էին գնում ամենից քաղցր ածողները, շէյխին էին պատկանում անապատի զաւակների բոլոր գեղեցիկները, նորան էին օրհնում բոլոր մոլլաները և սէյիդները... բայց կար մի դաս և այդ խեղճ մարդիկն էին, որոնք միայն վախենում էին նրանից...

Եւ այդ բոլորը նա վայելում էր անհոգ, զւարթ և ուրախ, նա սկի չը գիտէր էլ թէ իւր ծառաները ինչպէս քերթում էին խեղճ մարդկանց, կողոպտում էին նրանց, ծանր հարկերի տակ ճնշում, և բերում լցնում էին գանձարանը... Թող աշխարհքը քանդւէր, միայն թէ շէյխի գանձարանից ոսկին չը պակսէր, հարէմից կինը, մառանից գինին և ճաշը զւարճալի անող երաժիշտները...

Շէյխի եկամուտների աղբիւրը քաղաքից երկու

[1]) Արաբիայում և Պարսկաստանում դէրվիշները մի փոքրիկ վրան են խփում մի հարուստի դրան առջև և նորա տակը նստած այնքան աղօթում են, մինչև որ հարուստը մի պատկառելի ընծայ տայ և խնդրէ վրանը վերցնել։

փարսախ հեռու գտնւող չորս-հինգ գիւղերն էին։

Այդ գիւղերը լիքն էին բազմաթիւ մերկ, կեղտոտ և գժերի պէս գիւղացիներով, որոնք օրը մինչև երեկոյեան աշխատում էին. նրանց արտերը տալիս էր առատ ցորեն, նեղոսը ողողում էր հանդերը, ցորենը մէկին 100 էր տալիս և սակայն իրանք գիւղացիք ուտում էին այն բոյսերը, որոնցից շատ են բուսնում Երջանիկ երկրի դաշտերում... Ինչպէ՞ս կարելի է, որ կոպիտ գիւղացին ցորենի պէս ազնիւ հացով կերակրւէ. Շէյխի մարդիկը խլում էին նրանց ձեռքից բոլոր ցորենը, և թողնում էին նրանց խոտ ուտելու. լսո՞ւմ էք, լսմե՛ր [1]), Երջանիկ երկրում կային գիւղեր, որոնք խոտով միայն կերակրւում էին... Եւ լցւում էր Շէյխի գանձարանը ոսկիով, հարեմը գեղեցիկներով և հնչում երաժշտութիւնը պալատի սրահների մէջ և ողողում էր գինին և զւարճանում էր Շէյխը իւր շքեղութեան մէջ...

Բայց բաւական է Շէյխի մասին. լսմը այդպէս Շէյխեր շա՛տ է տեսել, նա ինքը խոտ է կերել, իսկ իւր քրտինքը կերցրել է աղաների, նա ինքը ծնել է գեղեցիկները և տւել է Շէյխերի հարեմներին... նրան զարմանալի չէ այդ...

Եւ նստած էր մի օր Շէյխը իւր պալատի աշտարակներից մէկում, ծխում էր ներգիլէն, իւր սի-

[1]) Թիւրքիայի հայ բոշաները իրանք իրանց լոմ են անւանում։

բուն կանանցից մէկը դրել էր քամբիռը լուսամուտի առջև, իւր քնքոյշ մատներով դողացնում էր նորա մաղանման թելերը և քամին տարածում էր նորա հրաշտակային ձայն դէպի հեռու անապատը...

Անապատում մի ծառախումբի տակ այդ օրը իջևանել էր մի խումբ, նա կտրել էր ամբողջ անապատը, իւր անգամներից մեռած թողել էր աւազների մէջ, կոտրուել ծարաւութիւնից, ջարդուել բէդուիններից և եկել ընկնել հանգստանում էր Բէն-էլ-մատար օազիսի արմատինեաց տակ...

Նոցա մօտ այլ ևս չէր մնացել մի բուռ ալիւր, մի հատ ցորեն կամ մի կտոր հաց... պէտք էր հաց գտնել։

Եւ հրամայեց խմբապետը խմբի երգեցող կանանց՝ քաղաքն իջնել, դռների մօտ հնչեցնել գնչուական երգեր, բաց կուրծքով պարել տաք երկրի մուսիլմանների պակշոտ աչքերի առջև և անել ամէն ինչ՝ միայն թէ հաց բերել խմբին, որին անօթութիւնից մահ էր սպասում...

Ահա Օազիսից ելան չորս կանայք՝ Նազին, Գիւլին, Օդիշուն և Բահարը, հագնուեցին, առին իրանց փոքրիկ բոժոժներով զարդարուած թմբուկները, մատերնին անցկացրին ծնծղաները և մտան քաղաք...

Նազին և Գիւլին երգում էին, Օդիշուն պարում և Բահարը հաւաքում էր բնակիչների տուած հաց կամ փողը։ Անտառի եղնիկը, Սուլթանի բախ-

կասը [1]), խղճի պարողը չունէին այն թեթև և արագ ոտերի շարժումը, մարմնի այն հաճելի դիւրաթեքութիւնը, աչքերի այն մեռցնող ոլորուածքը, ձեռքերի այն գողտրիկ պտոյտները, ինչ որ Օդիշուն, որ երբ պարում էր, հրեշտակի էր նմանում, որ սաւառնում է օդի մէջ, երբ ժպտում էր՝ մեռցնում էր և երբ խօսում էր, անապատի տաքութիւնից յետոյ հանդիպած ջուրը նորա ձայնի քաղցրութիւնը չունէր... Գեղեցիկ է լուսինը իւր ամբողջ ժամանակը՝ երբ լողում է երկնակամարի վերայ, հիանալի են աստղերը, պայծառ խոշղեցնող է արևի լոյսը. բայց Օդիշուի աչքերը, նորա դեր թշերը, գունատափ տամուկ ճակատը, քնքոյշ իրանը, վայելուչ հասակը և գողտրիկ բերանը աւելի գեղեցիկ, աւելի հիանալի, աւելի պայծառ և աւելի խոշղեցնող էին... մանաւանդ, երբ նա պարում էր և պարելու ժամանակ իւր աչքերով նայում մէկին և իւր երկնային ժպիտով ժպտում...

Երգեցին, պարեցին և հաւաքեցին ամբողջ օրը և երեկոյեան Շէյխ Սատոի պալատի առջև կանգ առին։

—Օդիշո՛ւ, ասաց նրան Նազին — այս տանտերը մեծ հարուստ է երևում, բանեցուր քո բոլոր ճարպիկութիւնդ, այնտեղ մերոնք հացի են սպասում։

Եւ երգեցին. Օդիշուն մատերին անց կացրեց

---

[1]) Պարող։

ծնծղաները, Նազին դողդողացնելով հնչեցրեց թմբուկը և Բահարը պալատի դրան մոտ կանգնած՝ սպասեց որ հաց կամ փող բերեն իրան...

Լռեց բամբիռը, շարժուեց շէյխը, գլուխը լուսամուտից դուրս հանեց և լսում էր... լսում էին բոլոր կանայք, լսում բոլոր պալատը, լսում և նայում էր ամբողջ թաղը... ամենքը լռել էին, Օղիշուն կարմրել էր նոր բացուած վարդի պէս, նա կոտրտուում էր, ոլորում էր աչքերը, գալարում թեւերը սահում էր գետնի վերայ, անհաւատալի արագութեամբ փոխում էր սիրուն ոտները, ծռմռում քնքոյշ մէջքը, իսկ Նազին և Գիւլին երգում էին։

Նոքա երգում էին լոմերի սիրելի երգը...

Թռի՛ր Բահար [1]), անցի՛ր լուսին,
Օգուտ չունիք խեղճ լոմին,
Լուսին լինի և կամ ձմեռ՝
Լոմը ե՞րբ է կեանք տեսեր.
Թռի՛ր Բահար, անցի՛ր լուսին
Օգուտ չունիք խեղճ լոմին...
Դաշտը իւր տուն, լեռը իւր բուն
Տանջւի լոմն օրն 'ի բուն
Փոքրիկ կարպետ իւր անկողին
Կուց մի դառը ջուր իւր բաժին...
Թռի՛ր Բահար, ծածկւիր լուսին
Ի՞նչ օգուտ դուք խեղճ լոմին...

---

[1]) Գարուն։

Շէյխը մի ոսկի ձգեց աշտարակից ցած և բարեհաճեց հարցնել Օղիշուի անունը, յետոյ երկու ծառայ մօտեցան նրանց և յայտնեցին որ «մեծանուն շէյխը» կամենում էր, որ բոշաները պալատ մտնէին և իւր ներկայութեամբ պարէին և երգէին։

Օղիշուն, Նազին և Գիւլին Բահարին խնդրեցին որ հաւաքածները Օազիսում սպասող խմբին տանէ, իսկ իրանք աւելի մեծ վարձատրութեան յոյսով՝ պալատը մտան...

Միւս օրը օազիսում յայտնուեցան միայն Նազին և Գիւլին, Օղիշուն չը կար...

Շէյխը իւր մօտ էր պահել երկնային Օղիշուին... Բոշաների խումբը երդուեց չը հեռանալ օազիսից, իսկ Օղիշուի հայրը գտաւ մի տարձանակ, հագուստների մէջ թաղցրեց մի թիւնաւոր դաշոյն և քաղաք մտաւ։

Անցան օրեր, ոչ Օղիշուի և ոչ էլ նորա հօր մասին լսում էին լուրեր. վերջապէս մի օր օազիսը եկան երկուսն էլ. Օղիշուն յղի և տգեղացած, իսկ հայրը արիւնոտ. նա սպանել էր Շէյխ Սատօին...

Մի քանի օրից յետոյ միւսիլմանները բռնեցին Օղիշուի հօրը և կախեցին քաղաքի դրան մօտ, իսկ բոշաների խումբը նորէն կտրեց անապատը և երբ հասել էր Աջէմի երկիրը, Օղիշուն ծնեց մի զաւակ, որի անունը դրեց Հասան»...

Գ.

ԷԼ-ՄՈՒԻՆ

«Այդ միջոցին Սպահանում ապրում էր մի արաբ իշխան. նա կոչւում էր Էլ-Մուին. նորան պատւում և սիրում էին բոլորը, նա 60 տարեկան էր, երեք կին ունէր, բայց և ոչ մի զաւակ չունէր. ունէր ահագին հարստութիւն, մեծամեծ շէնքեր, հողեր, պարտէզներ, հայերի թաղերի մեծ մասը Էլ-Մուինին էր պատկանում և հայերի Խոջա-Աւագ իշխանը Էլ-Մուինի սիրելի բարեկամն էր։

Լոմերի խումբը իւր կէսը թողնելով անապատում, ձմեռ էր, երբ հասաւ Սպահան և հայերի վանքի մօտ կանգ առաւ հանգստանալու։

Էլ-Մուինը և Խոջա-Աւագ վանքից ելան և երբ տեսան լոմերին, խղճացին, հրամայեցին վանքումը տեղ տալ նրանց և հաց տալ։ Իսկ Էլ-Մուինը տեսաւ փոքրիկ Հասանին, գրաւուեց նորա գեղեցկութիւնով և նորա մօր հետ միասին առաւ իւր մօտ. Օդիշուն նրանից հայրութիւն տեսաւ և Հասանին Էլ-Մուինը մեծացրեց իւր թոռան պէս։

Մեծացաւ Հասանը, կարդաց ամբողջ Ղուրանը, տեղեկացաւ իմաստունների գիտութեանը, կռւի մէջ մտաւ և սարթիփ [1]) եղաւ և երբ Օդիշուն մեռել էր, Հասանը այլ ևս իրան պարսիկ էր կարծում, սկի

[1]) Պարսկական զեներալ։

մոքին չէր գալիս թէ ինքը լոմ է և լոմի զաւակ...

Այդ տարին շատ վատ տարի եղաւ Աջէմիստանի բոմերի [1]) համար. ամենքը կողոպտում, ամենքը վանդում էին նրանց. կողոպտում և նախատում էին, որովհետև բոմերից մէկը մի օր սիրեց մի պարսիկ աղջիկ, առաւ նորան և փախցրեց օսմանցւոց երկիրը... այդպէս բոմերի պատիւը ընկաւ, ամենքը սկսեցին կասկած տանել նրանց վերայ...

Բոմերը ժողովւեցան, մի քանի մեծ խմբեր կազմեցին և վճռեցին գաղթելու օսմանցւոց երկիրը...

Բայց գաղթելուց առաջ ուղարկեցին երկու ծերունիների Հասանի մօտ։

Հասանը զարմացմամբ լսեց որ իւր հետ ուզում են խօսել երկու «մթրբը ծերունիներ»... կարծեց թէ ողորմութիւն էին ուզում և հրամայեց նրանց փող տալ, բայց ծերունիները յայտնեցին, որ փող չեն ուզում, այլ նոյն իսկ իրան—Հասանի հետ խօսել։

Հասանը չուզեց ընդունել նրանց, բայց Էլ-Մուինը, որ մի խելօք և փորձաւած իշխան էր, համոզեց նրան լսելու մթրբբների խօսքերը։

Երկու ծերունիները գիւանխանէն մտան և չուզեցին դռան մօտ. վերի կողմում նստել էր Էլ-Մուինը դունաթափ իսկ Հասանը նրանից փոքր ինչ ցած

[1]) Այդպէս են կոչւում իրանց Պարսկաստանի «մթրբբ»-ներ (բոշաներ)։

դէմքը կնճռած, զզւանօք ծերունիներին էր նայում...

Երկու լոմերը փոքր ինչ լռեցին, յետոյ նրանցից մէկը շփեց մօրուքը և ասաց խուլ ձայնով Հասանին.

—Լոմ-Հասա՛ն, քո ցեղիդ ծերունիները քեզ են եկել ամբողջ ցեղի կողմից.

Հասան զարմացած նրանց նայեց:

—Ես Լոմ-Հասանը չեմ, գոչեց նա—ես կոչւում եմ Հասան վէլէդը Էլ-Մուինի... ի՞նչ էք ուզում ինձնից:

—Մենք, ասաց ծերունիներից երկրորդը—լոմերի իշխաններից ենք և եկել ենք Լոմ-Օդիշուի որդի Լոմ-Հասանի մօտ... արդեօք Հասանը չի՞ իմանում, որ ինքը լոմի զաւակ է և իրաւունք չունի իւր ցեղի մասին վատ մտածելու... Լոմերին պարսիկները հանգիստ չեն թողնում, այլ ևս հաց չը կայ նրանց այս երկրի մէջ, լոմերը գաղթում են, ուստի և մեզ ուղարկեցին Հասանի մօտ պահանջելու, որ Լոմ-Հասանը գայ և առաջնորդէ իրանց, Լոմ-Հասանը անգիր գիտէ ղուրանը, իմաստուններից լսել է նրանց գիտութիւնը, խելօք է, Իբն-Հասանը [1]) տուել է նրան իւր զօրութիւնը և լոմերը ցանկանում են, որ Հասանը իւր գիտցածներով օգնէ իւր ցեղին և իշխէ

[1]) Պարսկաց մի տառապելական կախարդ իմաստուն:

995

նրանց վերայ, ազատէ նրանց նեղութիւններից և իմաստուն անէ... Լոմ Կաղիրը ասաց, ինչ որ խնդրել էին իրան լոմերը...

Լոմ-Կաղիրը լռեց, Հասանը ապշել էր, բայց Էլ-Մուինը շարժւեց և դառնալով Հասանին, ասաց:

—Հասան, լսիր թէ քո պապը Էլ-Մուինը ի՞նչ կասէ, ո՛չ մի ժամանակ Էլ-Մուինի բերանը չի ստիլ, նա վատ չի խօսիլ, նորա գլուխը միշտ լաւ է մտածել և փա՛ռք Ալլահին և իւր մարգարէին... նա դեռ այնչափ չի ծերացել, որ ցանցառ բաներ խօսէ... թող իմանայ Հասանը, որ Էլ-Մուինը իւր կեանքը դրել է Հասանի համար, աշխատել է նորան իմաստուն դարձնել. Էլ-Մուինի գանձարան միշտ բաց է նորա համար... թող իմանայ Հասանը, որ իւր մայրը Օդիշուն մըթրբի աղջիկ էր. Էլ-Մուինը թէև ցաւելով, բայց ճշմարտութեամբ ասում է, որ Հասանը իւր ո՛չ թէ հարազատ, այլ որդեգիր թոռն է... Հասանը այդ ծերունիների ցեղին է պատկանում...:

Հասանը լուռ էր. նա շփոթւել էր. մտածեց երկար, յետոյ յանկարծ ոտքի ելաւ և մտաւ միւս սենեակը, որտեղից նա փոքր ինչ յետոյ դուրս եկաւ հասարակ հագուստ հագած, որեխները ոտքերին, մի գիրք թեւի տակը, միւս ձեռքում հրացանը և դառնալով ծերունիներին ասաց:

—Իմ ազգը ինձ պէ՞տք ունի... գնա՛նք, ծերունիներ...: Էլ-Մուինը վեր թռաւ տեղից, գրկեց

ԱԽՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
АРМ-ССР

Հասանին, համբուրեց նորա ճակատը, օրհնեց և ասաց։

—Գնա՛, որդեա՛կ, Էլ-Մուինը օրհնում է քեզ նման իմաստուն որդուն... նորա գանձը առջևդ բաց է, օգտվիր որչափ կ'ուզես...

Հասանը եկաւ լոմերի մօտ և երկու օրից յետոյ լոմերի ցեղերը նորա առաջնորդութեամբ օսմանցւոց հողն էին անցնում...

Հասանը հրամայեց որ այնուհետև իրան ո՛չ թէ Հասան Էլ-Մուինի, այլ միայն Լոմ-Հասան կոչեն։

Լոմ-Հասան իմաստուն էր Իբն-Հասանի պէս, քաջ էր Ռուստէմզալի նման և անվախ, ազնիւ էր և բարի, նորան ամենքը սիրում էին։

Օսմանցու հողերի մէջ լոմերը հանդիպեցին իրանց ցեղակիցներին, Լոմ-Հասանը բարեկամացաւ նրանց մեծաւորի հետ և նորա Սաբա աղջիկը իրան կին առաւ։

Սաբան մի շատ սիրուն աղջիկ էր, քաջ էր ինչպէս առիւծ, նա քանի անգամ քիչ մնաց ցած գլորէր Լոմ-Հասանին. Սաբան Օղիշուից գեղեցիկ էր, բայց պարելու փոխարէն նա գիտէր կռուել—և լա՛ւ կռուել...

Լոմ-Հասանը սիրեց նորան, իրան կին առաւ. Լոմ-Հասանը սովորեցրեց նորան իմաստութիւն, Լոմ-Հասան...»

Ցանկարծ խշխշացին խոտերը, գամփռը վեր թռնելով փոքր ինչ մռմռաց, յետոյ մի ոտիւն զոր-

ծեց և մտաւ խոտերի մէջ և երբ ամենք եռև էին նայում, լսեց մի խռպոտ ձայն, որը գոչում էր.

—Նորէն ո՞վ է այն, որ իմ մարդուս անունը իւր բերանն է առել...

Դ.

ԽԱԹ-ՍԱՌԱ

Բոշաները բոլորը վեր թռան, պատմութիւնը կիսատ մնաց, և խոտերի միջից դուրս գալով նրանց առջև կանգնեց մի երկարահասակ խոշոր կին ցնցոտիներով, ձեռքին ահագին մի ցուպ, ոտերին տրեխ, գլուխը փաթաթած մի մեծ կարմիր թաշկինակով, իսկ մէջքին փաթաթուած գոտի մէջ երևում էին երկու ատրճանակներ և մի կեռ դաշոյնի կոթեր։

Երկարահասակ, պառաւ, սակայն խիստ առոյգ կազմուածքով միակնեայ կին էր, չեչոտ, խիստ տգեղ դէմքով, խորշոմած ճակատով և այտերով, ատամները կիսովին թափուած, իսկ իւր միակ մեծ աչքը այնպէս փայլում էր, որ տեսնողը կը վախենար. այնչափ երկարահասակ էր, որ մէջքը փոքր ինչ ծռուել էր. ձայնը խռպոտ առնական ձայն, ջլապինդ սոթոտած բազուկներ, կոշտ-ահագին խոշոր մատներով ձեռքեր, երկար ոտներ, լայն կուրծք, թիկնաւէտ մէջք, երկար լիքը վիզ. երկար դիզացած մազերը՝ ալեխառն...

Նա մի քայլ յառաջացաւ, ահագին հաստ ցու�ը շիւղի պէս բարձրացնելով ուսի վերայ դրաւ, ոտովը խփեց հեռու շպրտեց իւր ոտների մոտ քծնող գամփռին, մի շանթահար ակնարկ ձգեց բոլորի վերայ և դուռաց նորէն։

—Ո՞վ էր այն, որ իմ մարդուս մասին էր խօսում։ բոլորը ետ ետ քաշուեցին, իսկ պատմողը ժպտեց և ասաց.

—Ես էի, Խաթ-Սաբա՛, մի՞թէ վատ եմ անում, որ լոմերին անգաղար յիշեցնում եմ քո իմաստուն և քաջ երիկդ.

—Հը՛մ... մռմռաց Խաթ-Սաբան հանդարտելով. վատ չես անում, Մուրա՛դ, բայց չէ՞ որ ես նորա մասին կամ նորա անունը երբ լսում եմ, յիշում եմ որ կին եմ և լաց չեմ կարողանում զսպել. ինձնից հեռու, միշտ հեռու խօսեցէք. Լոմ-Հասանս առիւծ էր, լոմերը և նորա կինը կորցրին շատ բան...

Միւս բոշաները հետզհետէ մօտենում էին։

—Տղե՛ր, գոչեց Խաթ-Սաբան, փոքր ինչ լռութիւնից յետոյ—ես դաշտից եմ գալիս և նոր լուրեր եմ բերում.

—Էլի մենա՞կ էիր գնացել, հարցրին մի քանիսը։

—Այստեղ զգուշացիր Խաթ-Սաբա՛—ասաց մի ծերունի—Զիւլինի մէջ աւազակ հարէմ իներ [1]) շատ կան։

[1]) Թաթար աւազակներ։

—Էհէ՛, գոչեց պառաւը—խրա՞տ էք տալիս Սաբային, ոչ ոք նորան չի կարող դիպչել առանց մահը աչք առնելու։

—Հեռուից կարող են խփել, քիւրդերը բոլորն էլ հրացաններ ունին այժմ, որ կէս ժամ հեռուից մարդ է գլորում։

—Դատարկ բաներ, ժպտեց Խաթ-Սաբան—ինձ գլորելու մէջ շահ չը կայ... լսեցէ՛ք, ձեզ լուրեր տամ... Դաշտը առանց էն էլ զինուորներով լցուել է, Զանգազի մէջ վրան խփել նստել են հարկահաններ և զինուորներ. Հասան-Ղալայի բէգը հրամայել է հարկ հաւաքել... Զանգազցոց կաշին քերթել են սկսել, Արտօսցիները գիւղը թողել՝ սարերն են փախչում, զինուորները ձեռը ընկածը թալանում են... երեք Զանգազցի իշխանների բռնել՝ գիւղից 7—800 հարիւր ոսկի փող են պահանջում։

—7-800 ոսկի, բացականչեցին բոլորը։

—Այո՛, սաղ Բասէնը ծախես, այդքան չ՝արժէ. մերոնցից էլ Սերգօին բռնել են և վրանները տարել...

—Ա՛խ... բացականչեցին բոլորը—արդեօք մեզնի՞ց ինչ են ուզում։

Խաթ-Սաբան նստեց, ցուցը ոտքերի մէջն առաւ, պահ մի սրա-նրա երեսին նայեց, յետոյ շոյեց իւր կողքին պառկած գամփռին և ժպտելով ասաց։

—Ես իսկապէս չը գիտեմ թէ լոմերից ի՞նչ են պահանջում, բայց Սերգօին բռնել են, ոտները ու ձեռները կապել, մի խրճիթ են գտել ու Զանգազցոց

հետ փակել այնտեղ... մենք մոռացիր էինք վաղը առաւօտեան հեռանալ Զիւնից, բայց այլ ևս չենք կարող, Սերգօին պիտի ազատել։ Այդ այդպէս. մեր եւ մնացող ընկերներն էլ դեռ չեն երևում, վախենում եմ որ նրանց էլ բռնած լինին դաշտի մէջ... ինչպէս երևում է լոմերը հրացանների պէտք պիտի ունենան, եթէ չեն կամենում իրանց տաւարները առաջին հանդիպած զինուորների խմբին թողել և իրանք նորէն խոտ ուտելով սար ու ձոր ընկնել քաղցած... Խաթ-Սաբան տաւար չի տալ ոչ ոքի քանի կենդանի է. Լոմ-Հասանը նորան սովրեցրեց, որ հողը Աստծոյ է, քրտինքը աշխատողին և աշխատողի ունեցածը ոչ ոք խլելու իրաւունք չունի. Լոմ-Հասանը սովորցրեց Նորան, որ պէտք է հող ունենալ, վարել, ցանել և հնձել, ինչպէս անում են ամենքը. սովորցրեց, որ մուրալը վատ բան է, իսկ աշխատելը Լոմի միակ փրկութեան միջոցն է... Նորա մեռնելուց յետոյ տարիներ անցան և Լոմը դեռ տեղ չունի, բայց աշխատել է և իւր աշխատանքը վայելել, վա՛յ նրան, ով կ՚ուզենայ Խաթ-Սաբայի խումբից խլել նորա ունեցածը...

Նա լռեց. ժպտում էր և ձեռքի ցուպը երբեմն ուսին և երբեմն ծնկների վերայ էր դնում. ամենքը զլուխները կախած՝ լսում էին նորան։

—Տղերք, գոչեց Խաթ-Սաբաթ պահ մի լռելուց յետոյ, դաշտից մեր վառած կրակները երևում են, բոլորը գիտեն այժմ որ Զիւինի դիւզի վերայ էլ

բնակիչ կայ... Հիմա այնպէս ժամանակ է որ բէգերը ճրագով մարդ են փնտռում, որ հարկ ու տուրք առնեն... Թող մի քանի հոգի տաւարները քաշեն լեռների մէջ արածելու. մի անգամ երբ առանց տաւարի մնացինք, մեզնից էլ տուրք չեն կարող առնել, հող չունինք, տաւար էլ չենք ունենայ։ Շարժուեցէք, վաղը առաւօտեան կարելի է հարկահանը մտնէ այստեղ։

—Որտե՞ղ տանենք տաւարները, հարցրեց Մուրադը։

—Ասացի որ լեռների մէջ. մէկ լաւ ձոր գտէք և թողէք այն տեղ արածելու. երեք հոգի հերիք է դրա համար. էգուց երեկոյեան մէկը թող գայ մեզ մօտ որ եղածը իմանայ. ա՛յ, կ՚ուզես Մուրա՛դ, գնացողներից մէկը եղիր դու, շատ վախկոտ ես, հանդիստ կը փուռես խոտերի մէջ և ընկերներիդ հեքիաթներ կը պատմես.

—Ե՞ս, վախկո՞տ, գոչեց Մուրադը, ո՞վ տեսաւ իմ վախկոտութիւնը։

—Լա՛ւ, լա՛ւ, ծիծաղեց Խաթ-Սաբան, քեզ բոլորն էլ ճանաչում են. զինուորներին մաղի ծակերից ես նայում, Թովջիին [1]) քարի եռևից, հրացանին ձեռք չես կարողանում տալ, թէ ի՞նչ է քեզ կը խփես... լա՛ւ, պատասխան պէտք չէ, դու և երկու հոգի վերկացէք, տաւարները ժողովէք և մի լաւ տեղ արածելու տարէք.

---

[1]) Հարկահան.

Այդ ասելուց յետոյ, Խաթ-Սաբան ոտքի ելաւ, իրան շրջապատողներին նայեց և հարցրեց։

— Հասանը ո՞ւր է.

— Դաշտի կողմն է պահպանում, պատասխանեց մի ծերունի.

— Հ՛ըմ... հրացան ունի՞ հետը։

— Ունի, քո հրացանդ է առել.

— Օղիշուի՞ս մօտ ով է մնացել ուրեմն։

— Վարդիկենց տունն է Օղիշուն.

Հասանը Խաթ-Սաբայի որդին էր, 35 տարեկան մի տղամարդ։ Բացի Հասանից, Խաթ-Սաբային մեռած անդրանիկ որդուց մնացել էր 17 տարեկան որբ Օղիշուն. իսկ միջակ որդին բաժանուել իրանից՝ ամուսնացել Էրզրում էր գնացել ընդ միշտ։ Լոմ-Հասանը վաղուց—40 տարի էր, որ մեռել էր և ծերունի 70-ամեայ Խաթ-Սաբային մնացել էին միայն մի առոյգ երիտասարդ որդի և մի սիրուն թոռ, որոնց նա չափազանց սիրում էր։

Լոմ-Հասանի մահուան մասին համարեա ամէն բոշա ասում է, որ նա քիւրդերի հետ կռուելու ժամանակ 101 գնդակի վէրքեր ստացաւ, 300 քիւրդ կոտորեց, յետոյ իւր հրացանը իւր կողքին կանգնած կնոջը—Խաթ-Սաբային տուաւ և ընկաւ... իւր ընկնելով նա ջախջախեց 301-երորդ քիւրդին, որը կամենում էր նրան դաշոյնի մի հարուած տալ...

Ինքը Խաթ-Սաբան ոչինչ չէր պատմում իւր օտջ ամուսնոյ մահուան մասին և դորա համար իսկ

շատ բոշաներ կարծում էին թէ Լոմ-Հասանը կենդանի է և մի օր պիտի գայ իրանց օգնութեան, երբ Խաթ-Սաբան այլ ևս անկարող լինի և ժողովուրդը անգլուխ մնայ...

Առ այժմ Խաթ-Սաբան բոշաների այդ խմբի ցեղապետուհին էր, նրանից դողում էր իւրաքանչիւր բոշա, որովհետև Խաթ-Սաբան քաջ էր, խիստ և յանդուգն. նա միայն մի ցուցով մի անգամ ջախջախել էր չորս քիւրդերի, որոնք դաշոյններով նորա վերայ էին յարձակուել... նա ինքը շատ անգամ հրամայում էր պահապաններին քնել և միայնակ իւր գամփռի հետ, ցուպը ուսին դրած՝ գիշերն 'ի բուն անդադար ման էր գալիս և պահպանութիւն անում։

Երբեմն յանկարծ Խաթ-Սաբան ամբողջ օրը կամ ամբողջ գիշերը անհետանում էր, գամփռն իսկ չէր տանում հետը. սկզբում այդ բացակայութիւնը սկսեց անհանգիստ անել բոշաներին, նոքա հարցնում էին նորա ուր լինելու մասին. բայց Խաթ-Սաբան չուզեց պատասխանել, իսկ երբ պնդեցին՝ նա ձախ ձեռքով մի ուժգին ապտակ խփեց մէկին, ոտով երեք քայլ հեռու շպրտեց երկրորդին և ցուպը այնպէս տատանեց ու միակ աչքը պլորեց՝ որ բոլորը լռեցին և խոհեմութիւն համարեցին այլ ևս չը հետաքրքրուել։

Խաթ-Սաբան երկու աչք ունէր, ձախ աչքի կուրութեան մասին ոչ ոք մի բան չը գիտէր։ Այդ այսպէս էր պատահել։

Մի օր Խաթ-Սաբան ցուպը ուսին դրած ան-

հեռացել էր և երբ երկու օր բացակայութիւնից յետոյ վերադառնում էր, ձախ աչքը կապած էր մի քիւրջով։ Մի ամսից յետոյ քիւրջը արձակուեց և նորա տակում տեսնուեց միայն մի կոյր աչք առանց սպիտակուցի և բիբի, կարծես փորուած հանած էին այդ մասերը։

Երբ հարցրել էին, նա ցուպը բարձրացել և

—Զե՞զ ինչ, գոչել էր—Խաթ-Սաբայից միայն մի Լոմ-Հասանը կարող էր հաշիւ պահանջել, և այդ Լոմ-Հասանն էլ այժմ մեռաւ...

Եւ ամենքը ստիպուել էին լռել։

Ե.

ՄԱՐԴՈՍ

Էրզրումի «Ղաւաղի դրան» կողմը, եկեղեցւոյ ուղղութեամբ 100 քայլ ցած, գտնուում են մի շարք տներ, որոնց ետևում փռուում են բանջարանոցներ, կողքից անցնում են կեղտոտ ջրերի առուակներ և առջևումը տարածուած է Թիւրքաց մեծ դերեզմանատունը։

Այդ տների մէջ միայն մէկը երկյարկանի էր սորանից 7 տարի առաջ. միւսները միայարկ գծուած շէնքեր էին փոքրիկ լուսամուտներով, ամուր դռներով և ցեխով կամ կովի աղլով ծեփած պատերով։

Երկյարկանի տունն իսկ մի այլանդակ կերպա-

բանք ունէր. նորա առաջին յարկի պատերի վերայ գունդ գունդ ծեփուած էին թաց քակուի կոորներ. կողքին գտնուող փոքրիկ հրապարակում դարսուած էին կոյտ կոյտ քարեր, փոքր ինչ հեռու աղլի դէզեր. դուռն առջև կար փոքրիկ երկու մարդու կանգնելու չափ մի պարտէզ երեք մանր ուռենի ծառերով միայն զարդարուած և միջից երկուսի բաժանուած այն առուակով, որի միջով անցնում էր Էրզրումի կոյանոցի ջրի մի մասը և գնում ջրում էր բանջարանոցները։

Տան վերի յարկը երեք անփեղկ, անապակի լուսամուտներ միայն ունէր. բայց շինուած էր քարից, իսկ ներքին յարկը, ուր բնակուում էին տանտէրը իւր ընտանիքով, կազմուած էր մի կլոր լայն սենեակից, որի մի անկիւնում կանգնեցրած կար տախտակեայ մեծ թախտ, մի կողմումը ծխում էր թոնիրը, մի ուրիշ անկիւնում դիզուած կար լաւաշ հաց, կողքին ունենալով ալիւրի մեծ դարանը։ Անկողին, պղնձեղէն, կարասներ, փոքրիկ մերկ մանուկներ, աւելներ և ջրի ամաններ խառնուել էին միմեանց. մի կին մինչև կէս մէջքը կարմիր շալէ մի գոգնոց կապած՝ անց ու դարձ էր անում այդ կահ կարասիքների միջով, գոգնոցով հովահրում էր թոնիրի կրակը, կեղտոտ ձեռքերով սրբում էր աչքերից ծուխի պատճառով հոսող արցունքը, երբեմն մի կիցով լուացնում էր մանուկներից մէկի ճիչը, մի կոր հաց տալով հեռացնում էր իւր փէշից բռնող երկրորդին և մի տարօրինակ հայերէն հայհոյանք էր արձակում դէպի

երրորդ մանուկը, որը գլուխը կոխել էր կարասներից մէկի մէջ և երգելով աշխատում էր պոկել կարասի կողքերին ամուր կպած դաւուրմայի կտորները։

Իսկ բարձր տախտակեայ թախտի վերայ պառկել էր մի տղամարդ, իւր չիբուխի կծու ծուխը խառնում էր թոնիրի դարշահոտ ծուխին և բոլորովին անհոգ էր վերաբերուում դէպի իւր շուրջը կատարուած իրողութիւնները։

Դա տանտէրն էր. 30-ից անց մի դեր տղամարդ, ցորենագոյն դէմքով (Թիւրքա-Հայաստանում շատ քիչ կարելի է տեսնել սպիտակ դէմքեր, մանաւանդ տղամարդկանց մէջ), հագած մի կտրուած շալէ լայն վարտիկ, կապոյտ մահուտից կարկտնած բաճկոն, մէջքին տաս տարի կարծես ջրի երես չը տեսած Պարսկաստանի մի մեծ շալ, գլուխը մի իւղոտ ֆէս՝ զզզուած եաղմայով փաթաթած, ոտքերին մի գուլպա, որի տակը կաշի էր կարուած և աւելի հաստ էր, քան մի զինուորական կօշիկի տակը... կուրծքը բաց՝ երևում էր ջղուտ թիկունքը և մազոտ լանջը...

Նա ծխում էր։ Նորա երկար չիբուխի գլուխը դրուած էր դեղին պղնձեայ մի մոխրամանի մէջ, որի կողքին կար մի սև տուփ մէջը շորի մնձուր, սևացած կայծահանը և կայծաքար. դա նոցա լուցկին էր, լուցկի որից այժմ դեռ ևս գործածուում է Թիւրքա-Հայաստանի շատ կողմերում։

Իսկ երբ մանուկները սկսեցին շատ աղմուկ

հանել և նոցա մայրը իւր տարօրինակ հայհոյանքները աստիճանաբար խստացրեց, այն ժամանակ միայն տանուտէրը չիբուխի ծայրը բերանից հանեց և գոռաց.

—Զայներդ.-Մանուկները իսկոյն լռեցին։

Այժմ սկսեց մայրը.

—Զա՛յնդ... գոչեց նրան ևս տանուտէրը։

Եւ մայրն էլ լռեց։

—Մարիա՛մ, ասաց փոքր ինչ յետոյ տանուտէրը, ծուխդ քոռացնում է ինձ, շուտ արա՛...

—Ես ի՞նչ անեմ, ճչաց կինը—անիծած աթարները թաց են, մէկ շնորհքով արև էլ չ'եղաւ, որ լաւ չորանան. ցախն էլ երեկուայ անձրևից թրջուել է և չի վառուում, գոնէ փոքր ինչ գեաւան բերէիր սարից.

—Չէ՛ մէկ... դէմքը ծռմռեց տանուտէրը—այս քաղցած փորովս գնամ լեռը քեզ համար գեաւան բերեմ. ա՛յ, այն հին աւելներով վառիր թոնիրը... կերակո՞ւրը երբ կը լինի։

—Դեռ տեսնում ես որ թոնիրը չի իջել. թէ շատ քաղցած ես, քեզ հաց ու պանիր կեր ու գնա։

—Շա՛տ մի խօսիլ կնի՛կ, ես այսօր սարը երթացողը չեմ... քիչ յետոյ Գէորգ աղան պիտի գայ քար առնելու։

Մարիամը երբ այդ լսեց, յանկարծ գործը թողեց, գոգնոցի ծայրով աչքերը սրբեց և ասաց աղաչաւոր ձայնով։

—Ի՞նչ կը լինի, Մարդո՛ս, Գէորգ աղայի փողերիցը մէկ 50 ղուրուշ տուր Ակօին որ իրան հագուստ առնի...

—Էլի՞, գոռաց էրիկը բարկացած—Էլի՞ Ակօին հագուստ.նոր չէ՞ր որ մի ձեռք հագուստ առի։

—Վա՛յ... ե՞րբ էր այդ, անցեալ տարի ձմեռը նո՞ր ես համարում... խեղճի վերայ մի շնորհքով վարթիկ էլ չի մնացել. կօշիկները խօ, հազար կարկատան ունի վրան. Մարդոսը առանց պատասխանելու մի քանի կում ծխեց, չիբուխի գլխի մօտից կախուած սրածայր երկաթով խառնեց ծխանոցը և ծանր ծանր ու իւրաքանչիւր բառը շեշտելով ասաց։

—Հը՛մ... հարիւր հատ քար ծախեմ՝ ասենք թէ մեծերից՝ այս քեզ 200 ղուրուշ, իսկ եթէ փոքրերից՝ 100 կամ 150 ղուրուշ... ցորենի՞ տամ, պանիրի՞, իւղի՞ թէ Ակօին... Դեռ Զիթողցի խոտ ծախողն էլ առաւօտեան Գէօլ-Բաշիում՝ բողազիցս բռնել իւր 40 ղուրուշն էր ուզում... չէ՛, ախպէ՛ր... Ակօն թող սպասի դեռ... Աստուած ողորմած է, հալբաթ էլի քար առնող կը լինի, հիմա ե ա փ ո ւ շինել տուղ շատ կայ...

—Մա՛րդ, աղաչեց կինը—խեղճ Ակօն բոլորովին մերկ է մնացել. ասում է թէ վարժարանում վարժապետները միշտ կուում են հետը, ընկերները ծաղրում են.

—Ը՛մ... ահագին էշ է դարձել, ծաղրելուց էլ է վախենում, կասես 10 տարեկան աղայ լինի. չէ՛,

էգուց-էլօր վարժարանից պիտի հանեմ ու հեռաքար կարելու տանեմ. քսան տարեկան կը լինի շուտով...

—Ինչ անի խեղճը որ ուշ ենք ուսումի տալ. ինքը քի՞չ է ամաչում, որ տաս տարեկան տղաների հետ է նստում. մեղադ չէ՞ ինչ հալ քաշեցի, մինչև որ ընդունել տուի. ասում էին մեծ է... մեծացել է բան չի սովորիլ. խե՛ղճ Ակօն, տեսնէիր երէկ ինչպէս Պօղոս պատուելին գովում էր... ասում է թէ շատ լաւ է սովորում, համեստ է, միշտ եկեղեցի է գալիս... վարժարան մտնելիս գնում վարժապետների ձեռքն է համբուրում, սկի չի խաղում, հենց միշտ կարդում է.» ա՛յ, գնա դուրսը տես, քարերի եռևը նստել է ու գիրք է կարդում...

—Լա՛ւ, լա՛ւ, վարդապետ խօ չի՞ դառնալու. կանչիր գայ մէկ տեղ ուղարկեմ.

Մարիամը դռան մօտեցաւ, գլուխը դէպի փողոցը պարզեց և գոռաց.

—Ակո՛, Ակո...

Քարերի կոյտերի եռևից դուրս եկաւ մի երկարահասակ գեղեցկադէմ պատանի, խոշոր սև աչքերով, սև մազերով, թանձր յօնքերով... բեխերը նոր սկսել էր բուսնել. վայելուչ ուղիղ հասակ ունէր, սիրուն լայն դէմք, կոկ կարմիր այտեր, փոքրիկ կանացի բերան... մի խօսքով Ակօն—Մարիամի միակ եղբայրը—մի գեղեցկադէմ պատանի էր, թաղի բոլոր աղջիկները շատոնց իրանց աչքը նորա վրան էին

ձգել, տաճիկ աղաները կանգնում և նորան էին նայում երբ անցնում էր և փոքր ինչ հեռու Մ. Կիրակոս աղայի քոյրը միշտ նորա հետ խօսակցութեան էր մտնում, երբ սա դպրոցից տուն էր վերադառնում դրքերը կռնտակին։

Եթէ հագցնէին Ակօին մի կանոնաւոր հագուստ, թաղի մէջ ամենագեղեցիկը պիտի համարուէր. սակայն նորա վրայի բաճկոնը, ֆէսը և վարտիկը հազար ծակեր ունէին, կօշիկը մի հօխա ծանրութիւն՝ իւր վերայ կրող այլանդակ կարկտաններից, մազերը խռիւ և կեղտոտ, ձեռքերը ճաքճքած և կեղտի տառեր կապած, իսկ դէմքը թէև միշտ լւանում էր, սակայն կամ կը թանաքոտէր և կամ անուշադրութեամբ կը սւացնէր եկեղեցւոյ սև պատերը համբուրելու ժամանակ։

Երբ քոյրը կանչեց, Ակօն ծալեց ձեռքի գիրքը և մօտեցաւ. քոյրը դէւանօք նորան նայեց և

—Քեզի զուրբա՛ն, Ակո՛, ասաց, փեսադ քեզ տեղ պիտի ուղարկի, կերթա՞ս։

—Կերթամ, ասաց Ակօն խոնարհութեամբ և քրոջ հետ ներս մտաւ։

Երբ ներս մտան՝ տանուտէրը թողել էր չիբուխը և մատներով հաշիւ էր տեսնում։

—Ակո՛, գոչեց նա խիստ ձայնով, գնա հաջէ Մկրտիչ աղայի օդան և ասա որ քարերը եկել են... բայց, այդ ի՞նչ է հագուստներդ, փի՛նթի, դեռ երէկ էր որ նոր հագուստ հագար, ո՞վ

գիտէ ինչ չափխնութիւններ [1]) ես անում...

Ակօն լռութեամբ գլուխը կախեց։

—Մա՛րդ, գոչեց կինը—խեղճ Ակօն ի՞նչ անի, որ իւր վրայի շորը մի տարիից աւելի չի դիմանում։

—Զա՛ղնդ, գոռաց տանուտէրը, յետոյ դարձաւ Ակօին և ասաց—գնա՛, շո՛ւտ արի...

Ակօն տեղից չը շարժուեց։

—Հ՛ը, գոռաց Մարտո՛սը,—քարացե՞լ ես ի՞նչ է, չես լսում, գնա և շուտ արի...

—Ձեմ գնա՛... ինձ ծեծում են տաճարի փողոցում...

—Ծեծում է՞ն, ծիծաղեց Մարդոսը—վա՞յ իշի լակոտ վա՛յ, ահագին եզ ես դարձել ու ծե՞ծ էլ ես ուտում։

—Ինչ անեմ, թոթովեց Ակօն, Կարապետ պատւելիի հինգ տղերքը փայտերով վրաս են թափվում ու ծեծում թէ ի՞նչ է, ես նրանց դասը չեմ սովորեցնում։

—Ի՞նչի չես սովորեցնում, բոշայի լակո՛տ։

—Ես ինքս եմ սովորում։

—Հա՛յտէ, գնա՛, էդպէս քարոզներ շատ ենք լսել, թամբա՛լ... ասա, որ քարերը եկել են... շո՛ւտ...

Ակօն գողդողալով դուրս գնաց և նստեց փողոցի դռան վերայ ու սկսեց լաց լինել, իսկ քոյրը մէկ նորան և մէկ ամուսնուն էր նայում.

---

[1]) Սրիկայութիւններ։

—Կորաւ՛ր, գոռաց նորա վերայ Մարտոսը, ձրի հաց ուտել գիտե՞ս, Թամբալ, շուտ թէ չէ հոգիդ կը հանեմ, և խլեց պատին կոթնեցրած չիբուխը—տես քեզ ինչպէս կ՚ուղարկեմ...

—Ակօն ոտի ելաւ, բայց չը գնաց։

—Ձեռ լսում հա՞, գոչեց Մարդոսը։

Հազաւ կօշիկները ու ցած իջաւ չիբուխը բարձր բռնած, հրեց իւր դէմը կանգնած աղաչաւոր կնոջը և փողոց դուրս եկաւ...

Բայց այդ միջոցին պարտիզի պատի մօտ նստած մի երկարհասակ կին, որը, ոտերի մէջ առած մի ա-հագին ցուպ, կողքին ունենալով մի մեծ դամփռ, ննջում էր, գրաւեց Մարդոսի ուշադրութիւնը, նա մոռացաւ Ակօին, որը հեռու կանգնած դիտում էր, և մի քայլ արեց դէպի կինը։

Այդ ցնցոտիներով, բայց խոշոր մարմնով կինը գլուխը ձեռքերի մէջ առել, յայտնի չէր իսկապէս թէ քնած էր կամ արտասւում էր։

Երբ Մարդոսը մօտեցաւ, դամփռը գլուխը բարձրացրեց և մռմռաց. կինը ցնցւեց, ձեռքերը ետ քաշեց և դէմքը ցոյց տւաւ։

Միականի էր։

—Խաթ-Սաբա՛... գոռաց Մարդոսը ետ ետ քաշւելով...

2.

ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Մարդոսը Խաթ-Սաբայի երկրորդ որդին էր, որ բաժանւել էր իւր ցեղից, եկել Էրզրում պսակւել էր մի ուրիշ բոշայի աղջկայ վերայ և քարհատութիւնով էր զբաղւում։

Մարդոսը թէև բոշա էր ինքը, թէև բոշայի աղջիկ էր առել, բայց մոռանալով այդ «նախատական» անունից բոլորովին ազատւել, այսպիսի փոփոխութիւններ էր սկսել մտցնել իւր տան մէջ։

Կնոջը հրամայել էր, որ իւր ազգականների հետ երբէ՛ք յարաբերութիւն չ՚ունենայ. որդիներին հայկական զուտ անուններով էր յորջորջում, բոշաների երեսին երբէ՛ք չէր նայում և բացի իրանից ոչ ոք չը գիտէր թէ ինքը հայր-մայր ունի՞ թէ ոչ և եթէ ունի, ի՛նչ ցեղից են. երկչարկանի տներ շինեց, բոշայական բոլոր սովորութիւնները վերցրեց իւր տնից, հրամայեց իւր կնոջ այլ ևս իրան «բոշայի աղջիկ» կոչելու թոյլ չը տալ և որ առաւելն է, իւր որդիներին սովորցնում էր ծաղրել երբեմն քաղաքում թափառող բոշաներին, վազել նոցա ետևից, քարեր ձգել, «մուռատաս բոշա» կանչել և «բոշան եկաւ, քեզ կը տանի» բառերից աւելի սարսափել, քան «թիւրքը եկաւ կամ բողբոջը քեզ կը տանի» բառերից. Աւելի քան տաս տարի էր, որ Մարտոսը մտցրել էր

իւր տան մէջ կրթուելեան այդ ձևը, այնպէս, որ կինը այժմ վարժուել էր այլ ևս «բոշա» ասելով շնից ցած արարած հասկանալ, «բոշայի լակոտ» լսելով վիրաւորուել սաստիկ, վարժուել էր իրանց տունը եկող մաղ ծախող բոշաների վերայ կասկածանքով նայել և զգուշանալ, որ բան չը գողանան, մոռացել էր բոշայական առանձին շեշտը և լեզուն, սովորութիւններն իսկ սկսում էր կամաց կամաց փոխել և Մարտիրոսը տաս տարի աշխատելուց յետոյ յաջողուել էր բոլոր քաղաքից ճանաչուել դուռ հայ. այդ էր նորա փափագը, այլ ևս ոչ ոք գիտէր, որ թէ ինքը և թէ կինը բոշա էին, որովհետև կնոջ ծնողները մեռել էին և միայն Ակօն էր մնացել նրանցից։

Եւ եթէ Ակօին էլ դպրոցում «բոշայի լակոտ» էին անուանում, այդ նրանից էր, որ Ակօն շատ սէր ունէր թափառելու, անդադար դերեզմանատան ծառերի տակ գնում նստում էր, կիւրակի օրերը օրն ի բուն շրջակայ լեռները, Կըրք-Դէյիրման, Փալանթէօքանի, Լուսաւորչայ վանքի և այլ լեռների մէջ մենակ թափառում էր, բանջարներ էր ժողովում քաղաք բերում և ծախում էր իւր թղթի և գրքի համար փող ճարելու, դպրոցի մէջ ահագին առևտուր էր դարձնում-գրչի ծայրեր, կոթեր, թուղթ, հին գրքեր էր առնում և ծախում, փողը հաւաքում քրոջն էր տալիս, սակայն ոչ ոք չը գիտէր, որ Ակօի այդ գումարը գործածւում էր ուսման պարագաների համար, պարագաներ, որոնցից ամեն տեսակից և շատ՝ պահանջել գիտեն թիւրքահայոց ուսուցիչները։

Այդ բանի համար Ակօին «բոշայի լակոտ» էին անուանում։

Ակօն լսելով այդ նախատական ածականը գանգատում էր, ծեծկռտուում, լաց էր լինում և հազիւ մի քանի տարի յետոյ վարժեցրել էր իւր ընկերներին այլ ևս իրան «բոշայի լակոտ» չը կոչել։

Եւ այսպէս Մարտոսը լիովին հասել էր իւր փափագին, այլ ևս նա և իւր ընտանիքը բոշաներ չէին, այլ միայն Էրզրումի փոշա-Մահալէի հայ բնակիչներից ամենահարուստը և երկյարկանի տներ ունեցող Կարապետի որդի Մարտիրոսը, կարճ բառով—Կրպօինց Մարտոսը։

Նա արդէն մտածում էր, որ իւր մայրը մեռած կը լինի և ցեղակիցները աշխարհի, ո՞վ գիտէ, որ ծայրը կը լինին։

Ուստի, քարացաւ, երբ Ակօին չիբուխով ծեծելու ժամանակ իւր դրան մօտ տեսաւ իւր մօրը-Խաթ-Սաբային, զինուած ահագին վիգով և գամփռի հետ։

Խաթ-Սաբան նրան նայեց, ոտքի ելաւ և ասաց խուլ ձայնով և բոշայական բարբառով։

—Սիսորո՞վի է (ա՞յս է տունդ)։

Ու մի քայլ յառաջացաւ դէպի դուռը։

—Մարտոսը թողեց մնտենալու դրան, բայց երբ մայրը կամենում էր մտնել, մի ոտիւն գործելով փակեց նորա դէմը և կմկմալով ասաց.

—Այդ չէ իմ տունը։

Ա՛խ, այդ չէ՞, ուրեմն ո՞րն է տունդ, ներս գնանք, մայրդ յոգնել է, բայց կը խմի մի գաւաթ ջուր և քեզ կասէ իւր ասելիքը, որի համար նա երեք օրւայ ճանապարհ է կորել և եկել է Երզրում։

Մարտոսը շփոթւել էր և չը գիտէր ինչ անել. այդ միջոցին կինը դռան վերայ երևաց և տեսնելով, որ իւր ամուսինը մի բոշա կնոջ հետ խօսում է, իսկ Ակօն աղատ, հեռուից դիտում է, ժպտեց և ասաց.

—Մարտո՛ս, կերակուրը պատրաստ է, արի հաց ուտենք։

—Ա՛, դոչեց Խաթ-Սաբան—ուրեմն այս է եղել տունդ և դու ինձ խաբում ես, իսկ սա էլ կի՞նդ է... հը՛մ, վատ կին չի երևում, բայց շատ թոյլ է... ներս մտնենք։

Եւ առանց այլ և այլութեան ներս մտաւ, կանչեց դամփռին իւր մօտ, նստեց թոնիրի կողքին փռւած փսխաթի վերայ, ցուպը ծնկների վերայ դրաւ ու դառնալով տանտիկնոջ՝ ասաց.

—Հա՛րս, թէ թան ունիս մի քիչ թան տուր, թէ չ՝ունիս, մի ման ջուր տուր.

Մանուկները, որոնք մինչև Խաթ-Սաբայի խօսելը լռութեամբ դիտում էին այդ տեսարանը, յանկարծ ծափահարեցին և մօտենալով գոչեցին.

—Վա՛յ, բոշա է եղել...

—Մէկ աչք ունի, ծիծաղեց երկրորդը։

Մարտոսը երկու ուժգին հարւածներով կտրեց նրանց խօսքը և հրեց մի կողմ։

Սակայն Խաթ-Սաբան արդէն լսել էր ամէն ինչ. կատաղութեամբ աչքերը ոլորեց, գունաթափւեց, ցուպը բարձրացրեց, բայց նորէն ցած ձգեց և գլուխը խոնարհեցնելով մռմռաց։

—Ի՞նչ կայ, բոշա եմ և մի աչք ունիմ... ի՞նչ վատ բան է այդ...

—Իրա՞ւ է, ասաց այդ միջոցին Մարիամը մօտենալով Խաթ-Սաբային մի թաս թանով—դու բոշա՞ ես։

Խաթ-Սաբան առաւ թասը, ոտքից մինչև գլուխ չափեց հարսին և ասաց խստութեամբ։

—Իսկ դո՞ւ, էրի՞կդ և տղանե՞րդ բոշա չէ՞ք։

—Մենք բոշա չենք, պատասխանեց Մարիամը և ձեռքը դէպի նա պարզելով աւելացրեց—թասը ետ տուր, շուտ արա՛, չը դնես տոպրակի մէջ։

—Կնի՛կ... գոռաց Մարտոսը։

Խաթ-Սաբան դէն շպրտեց թասը և կաս-կարմիր կորած վեր թռաւ տեղից, գամփռը ատամները ցոյց տուեց և սկսեց մռմռալ և Մարիամը մի ճիչ արձակելով ետ ետ քաշւեց։

—Մա՛րդ, այս բոշային ինչո՞ւ ներս թողիր, գոչեց նա—հիմա տղաներիս մէկը կը տանի կամ մի բան կը գողանայ։

—Կնի՛կ... որոտաց Մարտոսը—ձայնդ կտրի՛ր...

—Չէ, չէ՛, ասաց Խաթ-Սաբան—թող որ բոլորը

ասի... ասա՛, սիրուն հարսս, էլ ինչ ասելիք ունիս։

—Դուրս գնա՛, ճչաց Մարիամը—մարդուս խելքին ասա, որ քեզ ներս թողեց.

—Ա՞յդ է բոլորը, պատասխանեց Խաթ-Սաբան—լա՛ւ, այժմ բեր ինձ նորից մի ման թան և գիտցի՛ր, որ բոլորդ էլ ինձ նման բոշաներ էք. եթէ ես տղայ փախցնող եմ, դուք էլ էք, եթէ գող եմ, դուք էլ գող էք...

Նորից նստեց, մի շանթահար ակնարկ ձգեց որդու վերայ և ասաց բոշայական լեզուով։

—Եթէ մեր ցեղի օգուտը չը լինէր, այս կնոջդ թոնիրը, իսկ տղաներիդ կարասների մէջ կը խոթէի...

—Ների՛ր, ասաց Մարտոսը—չը գիտեն...

Մարիամը, որ մի քիչ հասկանում էր այդ լեզուն, զարմացաւ բոշա կնոջ յանդուգն խօսքերի և իւր մարդու ճներիրս բառի վերայ. լռութեամբ մի թաս թան տուաւ, յետոյ տղաներին իւր կողքին հաւաքեց և մի անկիւնը քաշուեց, իսկ Ակօն փողոցի դռնից ներս մտաւ, կծկուեց ալիւրի դարանի կողքին և լռութեամբ դիտում էր այդ տեսարանը։

Խաթ-Սաբան տեսաւ նրան։

—Ո՞վ է այն, հարցրեց նա իւր որդուն։

—Կնոջս եղբայրն է։

—Հը՛մ... գեղեցիկ տղայ է. իսկ երե՛ք որդի ունիս։

—Այո՛, երեք։

—Երե՞քն էլ բոշաներին ատում են։

Մարտոսը չը պատասխանեց։

—Եւ դո՞ւ, դո՞ւ էլ ատում ես քո ցեղակից-ներիդ...

—Ե՞ս, թոթովեց Մարտոսը—ինձ համար բոլորն էլ մէկ են, հայ, թուրք կամ բոշա, բոլորն էլ մարդիկ են...

—Լաւ բոշան այդպէս չի ասիլ, այլ կ'ասի։ Ես բոշա եմ, իմ բարեկամներս նրանք են, որոնք չեն ատում բոշաներին, թշնամիներս նրանք՝ որոնք հանգիստ չեն թողնում նրանց... բայց դո՛ւ, երևի այլ ևս բոշա չես, ով գիտէ թիւրքացել ես... երանի հայ լինէիր, հայը գոնէ մեզ նման ճնշուած մի խեղճ ժողովուրդ է և հասկանում է բոշայի ցաւերը... խօ չե՞ս թիւրքացել։

—Ես Աստուածապաշտ եմ...

Խաթ-Սաբան ուշադրութեամբ նորան նայեց, յետոյ Մարիամին դարձաւ, հեգնութեան մի ակնարկ ձգեց նորա վերայ և ասաց.

—Հա՛րս, գիտե՞ս որ մարդդ իմ որդին է, դու իմ հարսն ես և որդիներդ իմ թոռներն են։

Իբր պատասխան դրան, թոռներից մէկը գլուխը դուրս հանեց մօր թևի տակից, միջահատեց տատի խօսքը և գոռաց։

—Շո՛ւն բոշա...

Խաթ-Սաբան դունաթափուեց, աչքը փայլեց, մի ոստիւն գործեց դէպի թոռը, բայց այնտեղ կանգ առաւ, չորս կողմը մի ակնարկ ձգեց, եկաւ որդու առջևը կանգնեց և գոռաց.

—Այս դո՞ւ ես սովորեցրել սրանց... 'ի հարկէ դու ես սովրեցրել...

Մարտոսը չը գիտէր ինչ անել, կատաղի ակնարկներ էր ձգում որդիների վերայ և մռմռում էր։

—Փողոցիցն են սովորել... փողոցիցը...

—Հայրի՛կ, գոչեց այն կողմից երկրորդ որդին— ես էլ ասե՞մ «շուն բոշա»...

Խաթ-Սաբան ցուպը ձեռք առաւ, քայլեց դէպի դուռը, յետոյ դարձաւ և ասաց որդուն։

—Հասան-Ղալայի բէգը մեր ցեղից 10 մարդ բռնել բանդն է դրել, մեր տաւարները քիւրդերը տարել են, լոմերը քաղցած են և խեղճ, ինձ ասացին, որ դու բէգի հետ բարեկամ ես, ոչինչ չե՞ս կարող անել ցեղակիցներիդ համար...

Այս սառնութեամբ ասուած խօսքերին Մարտոսը պահ մի չը կարողացաւ պատասխանել. կարմրեց, հազաց և կմկմաց.

—Թէև շատ բարեկամ եմ բէգի հետ, բայց չեմ կարող անել, որովհետև նա չը գիտէ որ ես էլ բոշա եմ...

—Հը՛մ, գիտէի որ այդպէս էր... ա՛յժմ, մնաս բարև, լոմերը մի կերպով կ'ազատուեն... բայց սկսած քո մօրից մինչև յետին Լոմը անիծում է քեզ՝ լինի նա ազատ կամ բանդարկուած... վախեցիր նրանց անէծքից, որովհետև մօրդ անէծքը խառնուում է նրանց հետ... մնաս բարև... գնա մզկիթումդ աղօթիր, դռանդ առջևը հաւաքուած շներին հաց ցրի՛ր

[1]) և սովրեցուր թոռներիս, որ իրանց տատին «շուն բոշա» կոչեն... անիծուի՛ս դու տնովդ տեղովդ...

Մի քայլ արաւ դէպի դուռը և երբ կամենում էր դուրս ելնել, տեսաւ Ակօին, կանգնեց նորա մօտ, պահ մի դիտեց նորա պատենական սիրուն դէմքը, յետոյ ձեռքը պարզեց դէպի նա և ասաց.

—Տղա՛յ, սիրեցի քեզ, ձեռքդ տուր տեսնեմ...

Առաւ ձեռքը, պարզեց դէպի նա և ասաց.

—Կը գա՞ս ինձ հետ, թէ չէ դու էլ դրանց պէս մեզ «շուն բոշա» ես կոչում... կը գա՞ս...

Ակօն քրոջը և փեսային նայեց։

—Ա՛խ, հասկացայ, ժպտեց Խաթ-Սաբան-դրանք քո տէրերն են... դու լա՛ւ ապագայ ունիս, եթէ երբէք կամենաս քո ցեղակիցներիդ միանալ՝ գնա՛ Թորթո՛ւմ, Լոմ-Գրիդորին հարցուր և կը հասնես նպատակիդ...

Ասաց, մի քայլ արեց դէպի դուռը, այնտեղ կանգ առնելով դարձա՛ւ, ձեռքը բարձրացրեց,

—Վա՛յ քե՛զ... գոչեց և արագութեամբ դուրս գնաց։

Դամիրը նոյնպէս դարձաւ, ատամները ցոյց տուեց Մարտոսին, մռմռաց և վազե՛ի վազ հետևեց Խաթ-Սաբայլին, որը արագ քայլերով դէպի Ղաւազի դուռն էր գնում առանց ետ նայելու։

---

[1]) Մահմեդականները այդպէս են անում. շաբաթը մի քանի անգամ շների համար յատկապէս հաց են առնում և հաւաքելով նոցա կտրում նոցա առջև։ Էրզրումի Մուսաֆայ փաշան նշանաւոր էր այդ բանի մէջ։

Է.

ՏՈՊՐԱԿՆԵՐԻ ՏՈՒՐՔ

Դաշտի մէջ եռ մնացող երեք այր, երեք կին և չորս մանուկ բոշաներ հարկահան զինուորներից բռնել և բանդարկել էին Զանգաղում, դեռ էս պատճառը յայտնի չէր։ Լեռնում քիւրդերը խմբով յարձակւել էին բոշաների նախիրի վերայ, սպանել էին երկու բոշաների և տաւարները տարել. միայն Մուրատը կարողացել էր փախչել և Զիւլինի դիւզում սպասող բոշաներին իմաց տալ իրանց կրած այդ մեծ հարւածը։

Բոշաների խումբը մնում էր անօթի, հագիւ տաս օրւայ պաշար ունէին. փորձեցին գիւղերն իջնել, բայց իջնողը բռնւում էր և բանտարկւում։ դաշտը զինւորներով լիքն էր. բոշաները վախից գիշերները կրակը անդամ չէին վառում. սկսել էին բանջարեղէններով կերակրւելը, ամենքի ունեցածը մէջ տեղ բերին և հասարակաց բաժին դարձրին, բայց ծերունիները արդէն սկսել էին մտածել ապագայի համար և մի գիշեր ժողով կազմելով Խաթ-Սաբայի վրանը մտան։ Խաթ-Սաբան ինքն էլ մտածում էր։ Խորհուրդը նրանով վերջացաւ, որ Խաթ-Սաբան ցուպը ձեռքն առաւ, գամփռին սուլեց և գնաց Էրզրում։ Նա գիտէր, որ իւր մեծ որդին Հասան-ղալայի բէգի մօտ բարեկամն էր, թէև կասկածում էր որ Մար-

տոսը բոշաների համար մի բան անէր, բայց ուզեց փորձել և եթէ չը յաջողէր, մաադիր էր Էրզրումի մէջ յայտնի բարեսիրտ հայ ծերունուն դիմել։

Եւ երբ Խաթ-Սաբան Էրզրումումն էր, Զիւլինի մէջ լցւած զինւորներից մի խումբ պատահմամբ Զիւլինի դիւզից անցնելով բոշաների տեղը երևան հանեց։

Խումբը շրջապատեց բոշաներին և իրանցից մէկին ուղարկեց դաշտը՝ Զանգաղում նստած բէգին իմաց տալու, որ տուրքի նոր աղբիւրներ են գտնւած...

Միւս օրը առաւօտեան, Հասան-ղալայի բէգը քսան զինւած ձիաներով Զիւլինի դիւզը եկաւ և իջաւ ամենալաւ վրանի տակ։

Բոշաները դողդողալով սպասում էին, կանայք չէին երևում, իսկ մանուկները խումբ առ խումբ թաղնւած խոտերի մէջ դիտում էին նոցա։

Բէգը հրամայեց բոշաներին, որ իւր մօտ կանչեն իրանց ցեղապետին։

— Ո՞վ է ձեր ցեղապետը, հարցրեց նա բոշաներից։

— Մեր ցեղապետը այստեղ չէ, պատասխանեց մի ծերունի բոշա մօտենալով։

— Որտե՞ղ է։

— Էրզրում է գնացել։

— Ի՞նչ է նորա անունը։

— Խաթ-Սաբա։

— Բէգը մի քրքիջ արձակեց և նորա գրագիրը

ու հարկահանը պարտք համարեցին նոյնպէս ծիծաղել։

—Այդ ի՞նչ այլանդակ անուն է, գոչեց բէգը։

—Զարմանալի անուն, վրայ տուաւ գրագիրը։

—Անասունի անուն է, աւելացրեց հարկահանը—դրանց ցեղապետը կամ մի շուն կը լինի և կամ մի խոզ, չէ՞ որ սրանք հայ բոշաներ են...

Եւ բոշաները լսում ու հասկանում էին այդ բոլորը։

—Ապա՛, ծիծաղեց բէգը ճաշակելով իւր առջև դրուած կարագը, որը գտել էր մի զաբթի է տակն ու վրայ անելով ամբողջ օրան և մտրակի հարուածներ տալով կանանց և մանուկներին—ապա՛ ասէք տեսնենք, ձեր ցեղապետը ի՞նչ տեսակ չէնէւէր է...

—Կին է, ասաց ծերունին։

—Կի՞ն, գոչեց զարմացմամբ բէգը։

—Կի՞ն, առանց բեկսե՞րի, բերանը բաց արեց գրագիրը։

—Եւ շրջազգեստո՞վ ու երկար մազերով—վեր թռաւ տեղից հարկահանը։

—Հետաքրքրիր է, ասաց գրագրին և հարկահանին դառնալով բէգը։

—Էւէտ [1]) էֆէնդի՛մ... դիտեց գրագիրը խոնարհելով։

—Սահէ բույուրուրսունուզ [2]) աւելացրեց հարկահանը նստելով—բայց ափսոս որ այստեղ չէ...

Եւ լռեցին, որովհետև բէգն էլ լռել՝ կարագ էր ուտում և աչքի տակով հեռուում պատկառանօք կանգնած բոշաներին էր նայում։

Զինուորները ձիերից իջել, նոցա ոտները կապել և արածելու էին թողել, իսկ իրանք երբ վրանները մտնելով ու մտրակներով մի քանիսներին ծեծելուց յետոյ, ուտելու ոչինչ չէին գտել՝ իրանց պայուսակից հանել էին կապոցներով հաց, միս և փոխինդ՝ փուել էին վտակի եզերքը և ճաշում էին քաղցած բոշաների աչքի առջև, որոնցից կը խլէին յետին ուտելիքը, եթէ սոքա ունենային։

Երբ բէգը բաւական կերաւ, դարձաւ իւր գրագրին և ասաց.

—Համով կարագ էր...

—Էւէտ, էֆէնդիմ, պատասխանեց գրագիրը.

—Դեռ այսօրուայ կարագ է... աւելացրեց հարկահանը և կողքին դրուած մի հատ տետրակ ձեռքն առաւ։

—Հա՛, խօսեց բէգը—Ալլէգին էֆէնդի, կարծո՞ւմ ես, որ այս խեղճ բոշաները տաւարներ ունենան։

—Ունին, դիտեց հարկահանը—այս կարագը նոր էր։

—Շատ էլ նորը չէր, դիտեց բէգը։

—Ի՞ հարկէ նորը չէ, ասաց գրագիրը շոշափելով մնացորդ կարագը։

---

[1]) Այո։

[2]) Ճշմարիտ էք հրամայում (ասում)։

—Այո՛, շատ էլ նոր չէ, աւելացրեց հարկահանը ճաշակելով կարագից մի կտոր, այնուամենայնիւ կունենան տաւար, թող հարցնեմ... Յետոյ դարձաւ բոշաներից մի Ծերունիի և ասաց կոպտութեամբ.

—Մօտ արի. Ծերո՛ւնի։

Ծերունին մի քայլ մօտեցաւ։

—Անունդ ի՞նչ է։

—Սախակ...

—Քա՞նի տղայ ունիս։

—Տղաներս մեռել են։

—Քանի՞ կնիկ ունես,

—Մէկ հատ։

Բէգը միջահատեց և ասաց հարկահանին։

—Ի՞նչ աւելորդ հարցեր են դրանք։

—Ճիշտ էք հրամայում, էֆէնդիմ, բայց ես գիտեմ սրանց հետ խօսելու ձևը... նախ սրտացաւ կ'երևամ, որ ինձնից բան չը պահեն...

—Ծերո՛ւնի, դարձաւ նա բոշային—քանի՞ տաւար ունիս։

—Տաւար չունիմ...

—Իսկ այս միւսնե՞րը...

—Ոչ մէկս էլ չունենք։

—Սո՛ւտ է, գոռաց բէգը։

—Այո՛, սուտ է, գոչեց գրագիրը։

—Աղա՛, ասաց բոշաներից մէկը մի քայլ յառաջանալով դէպի վրանը—ի՞նչու սուտ խօսենք... քիւրդերը վրայ տուին և մեր նախիրը բոլոր քշեցին տարան... քսան կով, 20 ոչխար, 4 էշ և 6 ձի... բոլորը տարան...

—Գրի՛ր, Ահմէդ էֆէնդի՛, ասաց հարկահանը գրագրին-քանի՞ ոչխար ասացիք, դարձաւ նա բոշային 18՝ հատ։

—20 հատ... բայց այժմ մի հատ էլ չը մնաց։

—Այդ իմ գործը չէ... յետո՞յ, 4 էշ... գրում ե՞ս Ահմէդ էֆէնդի՝... 6 հատ էլ ձի... լաւ յիշողութիւն ունիմ...

Եւ ժպտեց գոհութեամբ։

—Է՛, ասաց նա բոշային դառնալով-ուրեմն յիսուն հատ տաւար ունիք, հը՛մ, լա՛ւ...

—Զունինք այժմ մի հատ էլ, աղա՛, գոչեց Ծերունին-քիւրդերը տարան, մեզ քաղցած թողին, հիմա մենք խոտերով ենք կերակրւում։

Բէգը թիկն տուած՝ ծխում էր, գրագիրը գրչի կոթով ականջն էր խառնում, իսկ հարկահանը տետրակն էր քրքրում։

—Լա՛ւ, դարձաւ նա Ծերունի բոշային-50 տաւարը ունիք, իսկ քանի տղամարդ կայ ձեր օբայի մէջ։

—Ութ հոգի ենք, երկուսին քիւրդերը սպանեցին։

—Գրի՛ր, Ահմէդ էֆէնդի—տասը նիւֆիւս։

—Տասը չենք, նորէն մէջ մտաւ Ծերունին—երկուսին քիւրդերը սպանեցին։

—Ե՞ս ինչ անեմ, ուսերը թոթուեց հարկահանը—լա՛ւ, այժմ ասա ինձ, քանի կին-մարդ կայ օբայում։

—Երեսունից աւելի կան։

—Վա՜հ, գոչեց բէգը-այդչափ շա՞տ։

—Նրանց մարդիկ դաշտումն էին, դուք բռնել էք ու բանդարկել, ասաց Ծերունին։

—Ա՛, ծիծաղեց հարկահանը—նրանք ձերոնցի՞ց էին... լա՛ւ, գրի՛ր Ահմէդ էֆէնդի՛, 35 կամ 40, (Ի հարկէ 40 կը գրես) կին և մարդկանց վերայ աւելացուր 15 հոգի... Ծերո՛ւնի, դարձաւ նա բոշային, բռնուածները 15 հոգի են և ոչ 10-ը... ես լաւ յիշողութիւն ունեմ, սուտ էլ խօսել չը գիտեմ... գրեցի՞ր, Ահմէդ էֆէնդի... այժմ ջէմ արա...

—Իսկ սրանք մանուկներ չունի՞ն, հարցրեց բէգը յօրանջելով։

—Մանուկները չենք հաշուել, խեղճ են, դիտեց հարկահանը-մանուկներին մեծանալու ժամանակ կը հաշուենք... տեսնո՞ւմ ես, Ծերո՛ւնի, դարձաւ նա բոշային-ես գութ էլ ունեմ... լա՛ւ... այժմ մի բան ճնաց... ջէմ արի՞ր, Ահմէդ էֆէնդի։

—Արեցի, դիտեց գրագիրը-քսան կով, հատը 3 ղուրուշից՝ 60 ղուրուշ, քսան ոչխար, հատը 2 ղուրուշից 40 ղուրուշ, 4 էլ և 6 ձի-հատը 5 ղուրուշից՝ 50 ղուրուշ՝ այդ քեզ 156 ղուրուշ... քիչ եղաւ, բայց ճիշտը այս է... 25 տղամարդ, հատը 18 ղուրուշից՝ 450 ղուրուշ, 40 կնիկ, հատը 4 ղուրուշից 160 ղուրուշ... բոլորը միասին... շատ չէ, միայն 760 ղուրուշ, 40 ղուրուշ էլ գրագրի և թովջիի վարձը՝ 800 ղուրուշ... չնչին գումար,

սրա համար չարժէր էլ երկու ժամուայ ճանապարհ ելնել գալ...

—Սպասի՛ր, գոչեց հարկահանը—մի բան մոռացել էինք, սրանք բոլորը միասին 55 կամ 60 հոգի չեն. ամեն մէկը մի մուրացկանութեան տոպրակ կ'ունենայ, ինչպէս որ ամեն մի «չինգէնէ» ունի... դեռ մանուկներինը չեմ հաշուում... հատը 30 ղուրուշից քանի՞ կ'անի։

—Ա՛յ, այդ լաւ, ժպտեց գրագիրը-այժմ գումարը մեծացաւ... և հաշուելով՝ ասաց-ընդամենը 2600 ղուրուշ... մի կլորիկ գումար... 60 տոպրակ հաշուեցի... հը՛, ի՞նչպէս է, լաւ թուաբանութիւն գիտե՞մ...

Այդ միջոցին բէգի աչքերը փակուել էին և նա արդէն քնել էր գլուխը դրած թևի վերայ։

Բոշաները սարսափմամբ լսում էին այդ հաշիները և, երբ գումարը լսեցին, մի բարձրաձայն քրքիջ արձակեցին։

—Ի՞նչ է այն, գոչեց բէգը վեր թռնելով։

—Ի՞նչ պիտի լինի, աղա՛, ասաց մի Ծերունի բոշա—այս աղաները հաշուեցին, որ 2600 ղուրուշ պիտի տանք...

—Հը՛, ի՞նչ կայ, ասաց բէգը—բերէք վճարէք, ելնենք երթանք թէև քնելու համար վատ տեղ չէ այստեղ։

Եւ նորէն պառկեց։

—Իսկ մեր սպանուածնե՞րը, թալանուածնե՞րը, բանդարկուածնե՞րը...

—Գլուխ էք ցաւացնում, գոչեց բէգը պառկած տեղից—հեռացէ՛ք, կորէ՛ք և թողէք փոքր ինչ քնեմ...

Գրագիրը և հարկահանը դուրս եկան վրանից, մօտեցան վտակին, կուցով փոքր ինչ ջուր խմեցին և այնտեղ իսկ մէջքի վերայ փռուեցին գետին։

Քիչ յետոյ թէ՛ բէգը, թէ գրագիրը, թէ հարկահանը և թէ զինուորները՝ բոլորն էլ քնել էին. արևը արդէն շատ տաքացել էր. շներն իսկ վրանների հովանու տակ պառկած մրափում էին։

Ը.

ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐ

Թիւրքա-Հայաստանի ժողովրդեան մի մասը, շուրջ 50.000 ժողովուրդ կազմում են գնչունները, որոնք կոչւում են չինգէնէ, մթրբբ և կամ բոշա անուններով. շատ անգամ միայն «մաղագործներ»։ Այդ ժողովուրդը ցրւած է ամեն կողմ, սկսած Կ. Պոլսոյ շրջակայքից մինչև Էդիրնէ և Մակեդոնիա, մինչև Ամասիա, Մարզուան, Եւդոկիա, Կարին, Թորթում և այլ գաւառները։ Մեծամասնութիւնը նոցանից տեղ են բռնել Ամասիայի Վէզիր-Քէօփրից մինչև Քաստամունիի գիւղերը, կենտրոն ունենալով Բոյբաղ աւանը. այդտեղ միայն նոքա 7000 են և բոլորն էլ լուսաւորչական քրիստոնեաներ են—հայ բոշաներ։ Փոքրամասնութեամբ հայ բոշա-

ները բռնել են Էրզրումի բոշա-մահալլէ թաղը և Թորթումի դաշտերը։

Հայ բոշաները նման չեն Վանի, Կ. Պոլսի և Էդիրնէի շրջակայքերում վրանաբնակ և թափառական մահմեդական մթրբբներին, որոնք նշանաւոր են իրանց կեղտոտութեամբ և գողութեամբ և որոնք արհեստներով կազմում են մի քանի որոշ ցեղեր։

Այդ մահմեդական գնչուներից շատ սակաւները ունին խաշն և հող, զբաղւում են նոքա իրանց միջավայրում գտնւող ամենայետին արհեստներով, շինում են խոզանակ, մաղ և իրանց շինածները ուսերին առած պտտում են գիւղեր և քաղաքներ։

Հենց դոցանից է, որ բոլոր գնչունները առ հասարակ ճանաչւում են իբր թափառական մուրացիկ մի ժողովուրդ և դորա համար է, որ չը կարողանալով այդ զանազան ցեղերը միմեանցից որոշել, բոլորին էլ անխտիր կոչում են մաղագործ, մթրբբ, չինգէնէ կամ բոշա...

Բայց մթրբբը զանազանւում է բոշայից։ Բոշան քրիստոնեայ է, իսկ մթրբբը անխտիր կերպով դաւանում է իւր միջավայրի կրօնը, որ մեծամասամբ մահմեդականութիւնն է լինում։

Մաղագործները առ հասարակ մթրբբներ են, որոնք ամառը լեռների վերայ վրաններում, իսկ ձմեռը դեռնափոր խրճիթներում են բնակւում, գործում են մաղ, խոզանակ, աւել, փսիաթ և շատ անգամ էլ տեղ տեղ մաղեղէն տոպրակներ, կար-

պեռներ և այլն... Իրանց այդ բերքերով նոքա կազմում են առանձին ցեղ։

Մահմեդական գնչուների երկրորդ տեսակն են մուրացկան գնչուները, որոնք բոբիկ ոտներով, կտրտած հագուստով և, մի մի տոպրակ կողքից քաշ արած, անդադար քաղաքից քաղաք են գնում, մուրում են, ֆալ են բաց անում, գուշակութիւններ անում, բակլա գցում և զանազան այլ և այլ միջոցներով ապրուստ են ճարում։

Երրորդ տեսակն է երգող և պարող մթրբբներ։

Ոչ մի ազգ կամ ցեղ Տաճկաստանում այնչափ անբարոյական չէ, որքան գնչուների այդ տեսակը, որը հնարում է ամենալկտի երգեր, իւրաքանչիւր 40 փարայ տուողին է յանձնում իւր կինը և աղջիկը, իւր որդուն կամ եղբորը փոքրութիւնից սովրեցնում է պարել, հագցնում է կնոջ հագուստ և իւրաքանչիւր էֆէնդիի կրքերին է յանձնում մի քանի կոպէկի համար... պէտք է տեսնել թէ ինչպէս հայրը մի թմբուկ ձեռքին, իւր որդուն առջևն առած, նորա մազերը երկար թողած, ունքերը ներկած՝ գնում է պարելու տաճիկների մօտ... պէտք է տեսնել թէ ինչպէս կանայք, խումբ առ խումբ, հագած սեթևեթ հագուստներ, մանն գալիս Կ. Պոլսոյ փողոցներում, կանգնում են դռների առջև, սկսում են պարել և երգել... պէտք է տեսնել թէ ինչպէս երիտասարդները քաղաքից դուրս բանակած գնչուների վրաններն են լեցուում և, ամուսնոյն մի քանի կոպէկ

վճարելով, ամենայն հեշտութեամբ կարողանում են զարճանալ... դա մի այնպիսի սովորական բան է, որ դիտողութիւն անողի վերայ կը ծիծաղեն...

[redacted] փաշաների, բէգերի և այլն բախկանաները, թիւյսիզները և այլն այդ ցեղից են... երգողներն էլ այդ ցեղից են, լկտի երգերի հեղինակներն էլ այդ ցեղից են...

Մահմեդական գնչուների ցեղերն են կազմում նաև որսորդ մթրբբները, որոնք աղէսի մորթեր են բերում քաղաք և վաճառում... այդ ցեղերից են նաև երբեմն աւազակներ, որոնք ճանապարհների վերայ անցորդների են կողոպտում, եթէ ոյժ ունեն և լզում են ոտներ ու մի կտոր հաց ուզում, եթէ թոյլ են...։

Հայերը, թիւրքերը և բոլոր միւս ազգերը սաստիկ ատում են այդ ցեղերին, իրանց մանուկներին վախեցնում են բոշայի անունով, հայհոյանքի տեղ են ընդունում մթրբբ և բոշա բառերը. ճչացողին, որկրամոլին, ագահին և գողին «մթրբբ» ածականով են նախատում... Այդ ցեղը լիովին արհամարհած մի ցեղ է, լինի՛ նա հայ, լինի թիւրք, պարիաների պէս զրկած են ամէն իրաւունքներից, սակայն վճարում են հարկ թէ՛ ունեցածների և թէ չունեցածների համար և կան բազմաթիւ հարկերի կապալառուներ, որոնք գերադաս են համարում գնչուների այդ խեղճ, սարուկ ցեղերի հետ գործ ունենալը...

Հայ բոշաները բոլորովին տարբերուում են վե-

բոյիշեալ բոլոր ցեղերից թէ կրօնքով, թէ սովորութիւններով։ Հայ բոշաների կրօնը քրիստոնէութիւն է. շատ ջերմեռանդ են և «մուխսի» լինելու անգամ գնում են, միայն թէ հայերի հետ շատ քիչ յարաբերութիւն ունին, իսկ խնամութիւն ոչ, սոքա էլ հայերի պարիաներն են, սոցա միջից եկեղեցական չեն անում և նոյն իսկ միմեանց եկեղեցի դժուարութեամբ են մտնում։ Հայ բոշաների մեծ մասը Ամասիայի շրջակայքումն է, այնտեղ նոքա ունին հող, տուն և տաւար. այնտեղ, որպէս և Էրզրումի մէջ՝ նոքա հաստատաբնակ են, իսկ Թորթումի մէջ կան ցեղեր, որոնք հող չունին և անդադար թափառում են այս այն կողմ, սակայն մուրացկանութիւն չեն անում. նոքա զբաղւում են խաշնարածութեամբ և ձմեռը իրանց երաժշտական գործիքներով քաղաք և գիւղերն են իջնում հարսանիքներում նուագելու, ուր և երգում են իրանց երգերը, որոնք երբեմն շատ ծիծաղաշարժ, երբեմն լուրջ-խորամիտ և երբեմն մեղկ և տխուր են...

Նոքա սիրում են իրանց գեղեցիկ հեքիաթների մէջ գովել իրանց ազգի առասպելական կամ իրական դիւցազներին, արևելեան բանաստեղծութեամբ պատմում են Լոմ-Հասանի, Աբդիւլ-աղայի, Խաթ-Սաբայի և այլ հերոսների կեանքը... խօսում են մի առանձին լեզուով, որը փոքր ինչ նմանութիւն ունի հայերէնին, իսկ Էրզրումում բնակւողները, արդէն լիովին մոռացած իրանց լեզուն, մի առանձին շեշտով

հայերէն են խօսում և սակաւ առ սակաւ սկսել են հայերի հետ խնամութիւն իսկ անել. վերացել է սկսում այն խորթութիւնը, որը տիրում էր դոցա և հայերի մէջ... այժմ հայ բոշաներից քիչերն են մնացել, որոնք հողի տէր չեն և որոնք ստիպւած առ այժմ թափառում են ամբողջ Թիւրքա-Հայաստանում...

Թ.

ՕԴԻՇՈՒ

Հէնց այդպիսի հող չունեցող հայ բոշաների մի ցեղ էր Խաթ-Սաբայի խումբը, որը վրաններ էր խփել Զիւլինի դիւզի վերայ։

Խաթ-Սաբայի վրանից սկսած, որը իւր կողը ուել էր կիրճի մօտիկ մի բլրակի, վրանները փռւում էին մինչև դահաւանդը և այն տեղից ևս մինչև կրճի բերանը, ուր գտնվում էր Մնօյից Վարդիկի մազեղէն կտորներից կազմւած մեծ վրանը։

Դա մի եղեգնեայ միջորմով բաժանւած մեծ տեղ էր մէջ տեղում՝ վրանին վեղարի ձև էր տալիս մի հաստ սիւն, իսկ փոքրիկ սիւները իրր յենարան էին ծառայում և սև շորի միւս ծայրերը ամրացած էին մի փոքրիկ առուակի մէջ, որը փորւած էր վրանի շուրջը. նոցա մէջ էր հանգչում եղեգնեայ այդ ցանկը։

Վրանում այդ միջոցին կային միայն կարասներ, մի քանի հին կարպետներ, մի ճոճ կապած սիւնից

սիւն՝ որի մէջ պարկած աղաղակում էր մի թխագոյն մանուկ, կատուն ցատկում էր միջնորմի վրայով, իսկ մի կին կանգնած սիւնի մօտ նայում էր դէպի Խաթ-Սաբայի վրանը, ուր իջել քնում էր Հասան Ղալայի բէգը։

Հազիւ թէ հարկահանը և գրագիրը փռուել, առւակի եզերքը քնում էին, որ վրանի միջնորմի եռւից դուրս եկաւ մի աղջիկ և մօտենալով կնոջ՝ հարցրեց.

—Քնեցի՞ն բոլորը։

—Քնեցին, պատասխանեց կինը։

—Իսկ մերո՞նք... ասաց նա և նայեց բոշաներին, որոնք հեռացել ժողովւել էին մի վրանի մօտ և ցած ձայնով վիճում էին։

—Ա՛յ, ասաց կինը աղջկան—այժմ քնեցին, կը զարթնեն և ինչ որ ունինք-չունինք կը հաւաքեն, այն ժամանակ նոր թող գայ մայրդ և ուզածին չափ զոռգոռայ...

—Մա՞յրս ինչ անի, ծիծաղեց աղջիկը—նա գիտէ՞ր, որ Հասան-Ղալայի բէգը մեզ մօտ է գալու.

—Է՞հ, Օղի՛շու, գիտնար էլ՝ ոչինչ չէր կարող անել.

Կինը Վարտիկի կինն էր, նիհար և հասակաւոր. ժամանակին գեղեցիկ էր եղել, բայց այժմ նա նմանում էր մի թառամած ծաղկի. տխուր-մելամաղձոտ հայեացք, թոյլ շարժւածք, քնկած աչքեր և խոր ընկած թշեր. իսկ Օղիշուն, դա Խաթ-Սաբայի թոռն

էր, մի սիրուն հմայիչ աղջիկ պարթև հասակով, աշխոյժ մեծ աչքերով և թուխ դէմքով. բերանը փոքր ինչ մեծ էր, բայց չէր տգեղացնում դէմքը. վերին շրթունքի վերայ կարծես սկսել էր ընչացք բուսնել, որովհետև աղեղնաձև մի աղւամազ ծածկել էր քթի տակը. փոքր ինչ ծուռ քիթ և փոքրիկ, բերանի առջևի ատամները քիչ դուրս ցցւած, և այդ պատճառով, երբ նա ժպտում էր, այնչափ քաղցր, այնչափ գրաւիչ արտայայտութիւն ունէր այդ ժպիտը, որ ոչ ոք չէր կարող անտարբերութեամբ դիտել։ Լոմերը մինչև իսկ դիտել էին Օղիշուի այդ ժպիտը. դա գրաւել էր նոցա բանաստեղծին և նա, երբ լոմերի դէստէնը [1]) երգում էր, չէր մոռանում վերջումը երգելու սոյն տողերը.

Նորա ժպտի մէջ—երբոր ժպտում է—
Փայլում է բարին. կարծես մի բոպէ
Զար ոչինչ չը կայ աշխարհիս վերայ,
Եւ երկինք մի պարզ նորա մէջ ցոլայ...

Վերջապէս Օղիշուն իւր ամբողջութեամբ մի այնպիսի վայրենի գրաւիչ, զօրեղ գեղեցկութիւն էր կազմում, որ չունէր իւր մէջ ոչինչ մեղկ, թոյլ, հարեմական նշան և որից շատ քիչ սակայն կարելի է գտնել միմիայն լեռնաբնակ քիւրդերի և հայ բոշաների մէջ։ Այդ գեղեցկութիւնը պատկառանք իսկ ազդում է, մարդ կարծում է թէ անհնար է ունենալ

---

[1]) Գովասանական երգ։

նորան, բայց երբ մի անգամ ունեցար, անհնար է դիպչել նորան։

Օղիշուն այդպէս աղջիկ էր. նրանից վախենում էին բոշաները, որովհետև նա քաջ էր. քաջ ցուպ խաղացնող և գոտեմարտ, նորա մեծ թուխ մատներով քնքոյշ ձեռքերի ապտակները տապալեցնել էլ կարող էին։

—Լսի՛ր, ասաց Օղիշուն Վարտիկի կնոջ—մեծ մայրս եթէ այստեղ լինէր, այդ ցանցառ լոմերը այդպէս չէին ժողովիլ միայն խօսելու համար. նա կը հաւաքէր նոցա, կը տար նոցա ձեռքը մի մի ցուպ, կը կոտորէր այդ քնած զինուորներին և Հասան Ղալայի բէգին այդ գահաւանդից ցած կ'ուղարկէր դէպի դաշտը... իմ մեծ մօրիցս վախենում են բոլորը, որովհետև նա քաջ է...

—Տե՛ս, տե՛ս, ասաց Վարտիկի կինը—Հասանը և մարդս գալիս են։

—Եւ ի՞նչ խեղճ դէմքով, աւելացրեց Օղիշուն, կարծես լաց են լինում... է՛, Հասա՛ն, Հասա՛ն, կարծես Խաթ-Սաբայի, Լոմ Հասանի որդին չես...

Վրանը մտան երկու բոշաներ։

—Հէնց այդ է, գոչում էր Հասանը Վարդիկին, կարծում ես թէ մեր ունեցածները առնելով գո՞հ կը լինին... կը տեսնես, կը գան վրանդ էլ կը քանդուտեն, մէջքիդ մի լաւ հարուած էլ կը տան, կինդ էլ... հը՛մ... հրեց նա Վարդիկի կնոջ և Օղիշուին նայելով—չէ՛, հրացանս պիտի լեցնեմ... ես Օղիշուին սաղ սաղ չեմ տայ նոցա ձեռքը...

—Ո՞վ, գոչեց Օղիշուն-ե՞ս... անհոգ կա՛ց, դու՝ ք ձեր մասին մտածէք, Լոմ-Հասանի թոռը, լինի նա աղջիկ՝ կարող է իրան պաշտպանել...

—Լա՛ւ, լա՛ւ, ասաց Հասանը—այստեղ էլ բոշաներ չեն, տես նո՞ւմ ես այն հրացանները, բոլորն էլ լիքն են։

—Գիտեմ, ժպտաց Օղիշուն-բայց հեշտ չէ նոցա Օղիշուին սաղ սաղ ձեռք գցել.

—Բէգը անպատճառ մի օրին կը հանի թէ որ քեզ տեսնէ, ասաց մռայլ դէմքով Վարտիկը և նստեց գետնի վերայ, սիւնի մօտ. Հասանը ևս տեղաւորուեց նորա կողքին։

—Հը՛մ, ասաց Հասանը—մերոնք բոլորն էլ յուսահատուել են... և այսպիսի միջոցին էլ մայրս թողել Էրզրում է գնացել։

—Մայրս ի՞նչ անի, գոչեց Օղիշուն—նա խօ չը գիտէր որ բէգը պիտի գայ... դէ՛, դո՛ւ էլ Լոմ-Հասանի որդին ես... վեր կա՛ց, բոլորին հաւաքիր և կոտորեցէք այդ բարբարոսներին, չէ՞ որ դոքա զարթնելու են և երբ զարթնեն՝ անելու են ինչ որ մտածեն... խօ լաւ բան չե՞ն մտածիլ...

—Ասում ես, ասաց Հասանը—մենք խօ բացի փայտից ոչինչ չունինք, իսկ նոցա... տեսնում ե՞ս...

—Տեսնում եմ... եթէ չէք կարող ուրեմն փախէք քանի նոքա քնած են... էն որ ձեր բոլոր ունեցածները առնելու են... գոնէ փախնենք, որ ձեր կանանց չ'անպատուեն...

—Հը՛մ, արաւ Վարդիկը-վատ միտք չէ այդ... կիրճի մէջ մտնենք ու անցնենք դաշտը... քնած են։

—Է՛հ, ինչի՞ ես ասում... բոլորն էլ ձիաւոր են, կընկնին ետևներիցս ու վայ այն ժամանակ...

Այդ միջոցին զինուորներից մէկը արթնցաւ, յետոյ միւսը և 5 րոպէից յետոյ բոլորն էլ կռացած առուակի վերայ լուացել սկսեցին, յետոյ սկսեցին ծխել և կամաց կամաց մտնել վրանները։

Քիչ յետոյ հարկահանը և գրագիրն էլ զարթնեցին, մտան բէգի մօտ, բէգը վեր թռաւ, յօրանջեց, յետոյ դառնալով հարկահանին՝ ասաց։

—Վերջացրի՞ք...

—Դեռ չենք էլ սկսել։

—Դէ՛հ, շուտ արէք, շուտով կը մթնանայ...

Եւ ահա բոլորը ոտքի ելան և խառնուեցան միմեանց. զինուորները, բէգի և հարկահանի հրամանով, վրանները մտան ու սկսեցին քանդըռտել և տակն ու վրայ անել ամեն ինչ, մի քանի զինուորներ էլ լիովին մերկացնում էին մի վրանի առջև խմբուած տղամարդկանց, այլք կանանց հագուստների մէջ էին սպրտեցնում իրանց կեղտոտ ձեռները և գարշելի ժպիտով ժպտում էին նոցա արձակած ճիչերի վերայ... հարկահանը հրամաններ էր արձակում, մանուկ բոշաները ճչալ սկսեցին, կանայք փախչում էին այս-այն կողմ և Խաթ-Սաբայի վրանի մօտ կանգնած բէգը, դիտելով այդ բոլորը՝ փորը բռնած ծիծաղում էր։

Հարկահանը հրամայեց դատարկել վրանները,

նորա ոտքերի մօտ սկսեցին գլորել զանազան մեծութեամբ կաթսաներ, կարպետներ, բարձեր, նորա ձեռքն էին բերում լեցնում կանանց կամ աղջիկների վզից պոկած կեղծ ոսկիները. ապակեայ մանեակներ, գլխի թաշկինակներ և կօշիկներ...

Այդ բոլորից հարկահանը մտադիր էր կազմել գրագրի հաշուած 2.600 ղուրուշ հարկը։

Ծեծ, աղմուկ, լաց, ճիչ պատել էր Զիւլինի դիւզը...

Ամեն ինչ լռեց, որովհետև լսեց մի կատաղի ձայն և նորան յետևեց մի սուր ճիչ...

Քիչ յետոյ տեսնուեց Օղիշուն, որը հերարձակ իւր ցուպով գլորում էր իրան մօտեցող զիւորներին, ջախջախում էր թևեր, գլուխներ և հետզհետէ ընկրկում էր դէպի կիրճը... մի զինուոր արդէն բռնել էր նորա ցուպը, միւսները ոռնում և հայհոյում էին և Օղիշուն այնպէս ճչում էր, որ բէգը զարմացած գոչեց։

—Աղջի՞կ է այդ...

Խլեցին Օղիշու ձեռքից ցուպը, յետոյ բռնեցին նորան և երբ նա ճչում էր.

—Լռի՛ր, ասաց մօտեցող հարկահանը—քեզ բէգին պիտի տանենք...

Օղիշուն լռեց, թոթափեց իրան, ազատուեց զինուորների ձեռքից, մի բռունցքի հարուածով գլորեց հարկահանին և մտաւ կիրճը...

Զինուորները խմբովին հետևեցին նորան և

մինչդեռ բէգին իմաց էին տալիս, որ այդ աղջիկը մի հրաշալի գեղեցկութիւն ունի և բէգը հրամայում էր միւս զինուորներին էս վազել աղջկայ ետևից, Օղիշուն եղնիկի արագութեամբ վազեց դէպի խորը, մագլցեց մի ժայռի վերայ և երբ ետ էր նայում, ապշած կանգ առաւ, որովհետև մի երիտասարդ մարդ յանկարծ դուրս թռաւ ժայռի ետևից, դաշոյնի մի հարուածով փռեց առաջին զինուորին, երկրորդ եկողի գլուխը ջախջախեց հրացանի կոթով և գոռաց միւսներին՝

— Ետ կորէ՛ք, թէ չէ բոլորիդ էլ կը փռեմ... բէգը սկսեց անհամբեր լինել, յանկարծ լսեցան հրացանի ձայներ, յետոյ աղաղակներ և կիրճը մտնող զինուորները խուճապով Զիւլինի դիւղը լեցուեցան...

Եւ երբ բէգը ինքը մտնում էր կիրճը, զարմանք տեսաւ թէ ինչպէս մի ձիաւոր, գաւակն առած Օղիշուին՝ սրարշաւ իջնում էր դաշտը...

Արդէն ուշ էր, այլ էս նորա ետևից հասնել անկարելի էր։ Կիրճում փռուած էին չորս դիակներ, որոնք եկան միացան Օղիշուի ջախջախած երկու մեռած և երկու վիրաւորուած զինուորների հետ։

Ժ.

ԿԱՆՑԻ ԱԼԷՔ

Օղիշուն ժայռի գլխին կանգնած տեսաւ երիտասարդին և երբ զինուորները ընկրկում էին, նա մի

ուրախ շարժում գործեց, ցած սահեց ժայռից և վազելով դէպի երիտասարդը՝

— Ալէ՛ք... ասաց — դո՞ւ այստեղ...

— Այո՛, ժպտաց սիրազին երիտասարդը — բայց ամենից առաջ ձի նստիր, եթէ չես կամենում դոցա ձեռքը ընկնել...

Յետոյ, առանց սպասելու պատասխանի, թռաւ ձիու վերայ, առաւ գաւակին Օղիշուին և մտրակելով ձիուն, սրարշաւ դէպի դաշտն սկսեց իջնել։

Օղիշուն պինդ գրկեց Ալէքի մէջքը, երեսը նորա ուսին դրեց և ասաց.

— Փշի՛ր, Ալէ՛ք... երկրորդ անգամն է որ լոմերին լաւութիւն ես անում...

— Խօ չե՞ս յոգնել, հարցրեց Ալէքը։

— Ո՛չ, միայն ծնկներս սկսեցին ցաւել։

— Այդ նրանից է, որ թամբ չը կայ ձիու վերայ այնչափ շտապով եկայ, որ թամբը չը կարողացայ դրացիից վերցնել...

— Ինչո՞ւ էիր այդչափ շտապում։

— Շատ պարզ է... քաղաքում մարդ տեսայ, տեղդ իմացայ, մի ամբողջ ամիս էր, որ Թորթում էլ տեղ չը թողեցի ման եկայ. մէկը ասում էր դէպի Խնուս էք գնացել, մէկն էլ թէ Հասան Ղալայի մէջն էք...

— Մօրս տեսա՞ր ուրեմն.

— Տեսայ, Գրիգոր աղայի մօտ էր գնում. իսկ

դու պատմիր ինձ թէ Հասան ղալայի բէգը ի՞նչ գործ ունէր ձեզ հետ։

—Հարկ էիր պահանջում և 2.600 ղուրուշ հարկ.

—Հը՛մ... հա՞րկ էր պահանջում, ի հարկէ կը պահանջի, էլ Զանզաղում մարդ չեն թողել, որ չը ծեծէին ու չը բանտարկէին, հիմա էլ ձերոնց կը բռնեն բոլորին ու Զանզաղ կը տանեն, մանաւանդ որ սպանութիւն էլ եղաւ, կը կարծեն թէ անողը բոշա էր։

—Ա՛խ, գոչեց Օղիշուն—այդ ի՞նչ վատ բան եղաւ... ի զուր սպանեցիր.

—Թողնէի որ քեզ բէգի հարե՞մը տանէին, ո՛չ, եթէ դու չը կարողանայիր փախչել, լսո՞ւմ ես, Օղիշու, եթէ չը կարողանայիր, ես արդէն հրացանը լարել էի, քեզ պիտի սպանէի...

—Ալէ՛ք... գոչեց աղջիկը։

—Այո՛, շարունակեց Ալէքը—ինձ համար աւելի լաւ էր քո դիակը տեսնել, քան լսել, որ բէգի հարեմի մէջ գտնուող հայ կանանց մէջ դու էլ կաս... ա՛խ, չը գիտես, Օղիշո՛ւ, թէ այդ Հասան բէգը որչա՛փ անգութ, որչա՛փ գազան մարդ է... այժմ էլ տեսնո՞ւմ ես, սաղ բոշաներին փչացրեց...

—Եւ դեռ մէկն էլ չ՝եղաւ որ նորան փչացնէր։

—Է՛հ, այդպիսի մի սպանութիւն քիչ օգուտ է տալիս... փաշան բացի այն, որ վրէժը խեղճ ժողովրդից կը հանի, այլ և մի ուրիշ աւելի բարբարոսին

կը դնի սորա տեղը, որը կը գայ և հազար ու մէկ պատճառներով ժողովրդի շորերն անգամ վրաներից կը հանի։

Տիրեց փոքր ինչ լռութիւն, մութը սկսում էր պատել և մի թանձր մշուշ գալիս ծածկում էր բլրակների կատարները։

—Չե՞ս մրսում, հարցրեց նորէն Ալէքը։

—Ո՛չ, ես սովորել եմ դիմանալ։

—Գիտեմ որ քաջ և դիմացկուն աղջիկ ես, բայց գուցէ այս գիշեր ուշ հասնենք գիւղը։

—Հոգ չէ, իսկ դու չե՞ս մրսում։

—Ե՞ս, ծիծաղեց Ալէքը—ցուրտը ինձ հետ գործ չունի, ես ամառ ձմեռ մէկ այս հագուստն եմ հագնում... չե՞ս յիշում ինչպէս երբ Թորթումումն էիք և ես նոր էի տեսել քեզ, գալիս ձեր վրաններից հեռու բաց օդում գիշերում էի...

—Յիշում եմ, որ ես էլ կարպետ էի բերում տակը փռելու համար։

—Բարի աղջիկ ես, Օղիշու, և ես քեզ դորա համար էլ սիրում եմ... յիշո՞ւմ ես, թէ ինչպէս մի անգամ մայրդ քիչ մնաց փայտովը գլուխս ջարդէր։

—Յիշում եմ, որ յետոյ, երբ հօրեղբօրս քաղաքի դռնապան զինուորների ձեռքից ազատեցիր, մայրս ճակատդ համբուրեց.

—Հա՛, այժմ մօրդ հետ բարեկամ ենք... էլ այնուհետև չէր խրատում, երբ ձեր վրաններում երևում էի։

—Կարծեմ գիտէ իսկ մեր գաղտնիքը։

—Գի՞տէ, գոչեց Ալէքը—ի՞նքը ասաց։

—Չէ՛, բայց միշտ երբ անուշդ տալիս է, երեսիս է նայում և ծիծաղում է։

—Իսկ դո՞ւ։

—Ե՞ս, գիտես որ կարմրել չը գիտեմ... այժմ ո՞ւր ենք գնում մենք։

—Այստեղ մի ծանօթ գիւղ կայ. բարեկամ ունիմ անտեղ։

—Գիտե՞ս, Ալէ՛ք, խօսեց աղջիկը—լաւ չէ՞ր լինիլ, որ ինձ Երզրում—մեծ հօրեղբօրս տունը տանէիր։

—Իսկ մեր տունը—Կան չէ՞ս գալ։

—Ձեր տո՞ւն, ծիծաղեց աղջիկը—դեռ ժամանակը չէ, երբ մեծ մայրս մեզ կ՚օրհնի և քո մայրդ էլ խորթ չի նայիլ բոշաների վերայ՝ այն ժամանակ։

—Այսինքն երբ մեզ պսակե՞ն...

Օդիշուն դէմքը ամուր սեղմեց Ալէքի մէջքի վերայ. սա դարձաւ, նոցա դէմքերը միմեանց մօտեցան և առաջին անգամն էր, որ բնութեան այդ զաւակները աղատօրէն կարողացան համբուրել միմեանց... Ալէքը խլեց Նորան իւր գաւակի վրայից, երեխայի նման առաւ իւր ձեռքերի վերայ, դէմքը իջեցրեց դէպի Նորա կուրծքը և Օդիշուի երկար մազերը եկան ծածկելու նոցա միացած շրթունքները...

Կէս ժամից յետոյ Ալէքը իջաւ ձիուց, գիւղի

մի խրճիթի մօտ կանգ առաւ, ծեծեց դուռը և ներս մտաւ։

Իւր ծանօթ քիրուէի տունն էր այդ, ուր Նորան ընդունեցին։

Ալէքը Օդիշուին յանձնեց տանտիկնոջ, կերաւ հացը, առաւ հրացանը և ձի հեծաւ.

—Երզրում պիտի երթալ, ասաց նա—պիտի երթալ ծնողներիս հանգստացնել։

—Մեծ մօրս էլ կը տեսնե՞ս, հարցրեց Օդիշուն։

—Անպատճառ, Նորա հետ գործ ունիմ... պիտի մի անգամ վերջ տալ այս խայտառակութիւններին...

Եւ համբուրելով Օդիշուին՝ աւելացրեց։

—Անհոգ կաց...

Եւ մտրակելով ձին անյետացաւ մթութեան մէջ։

Կանցի Ալէքը պղնձագործ էր և Երզրումից կէս ժամ դէպի հիւսիս գտնուող Կան գիւղացի։ Նա գեղեցիկ չէր, սակայն առողջակազմ, առնական դէմքով և յայտնի Երզրումցի արհեստաւոր։

Նորան բոլորը ճանաչում էին։

ԺԱ.

«ՆԱՀԼԱԻ»

Այսպէս ուրեմն, բոշաների խումբը հազիւ թէ իջևանում էր Զիւլինի դիւղում, որ հեզհետ ոչնչանում էր. մի քանի օրւայ մէջ նա կորցրեց իւր նախիրը, երկու տղամարդ, բանդարկեցին շատերը,

Խաթ-Սաբան Էրզրում գնաց և բէգը հարկահանի հետ բացի բոշաներին բոլորովին մերկացնելուց, բռնեցին նոցանից շատերին, ծեծեցին միւսներին և աւարով իջան դէպի Զանգաղ, մինչդեռ միայն Օղիշուն այդ բոլորից կարողացաւ ազատուել:

Զանգաղում բէգը կատաղած հրամայեց իւր մօտ կանչել գիւղի խամփաներին և երբ նոքա եկել վրանից հեռու չոգել և դողդողալով սպասում էին, բէգը աչքերը ոլորեց և գոռաց՝

—Երդւում եմ որ դեռ գիշերւայ լուսինը չը տեսած, բոլորիդ սաստիկ կը պատժեմ, եթէ չը բերէք ինձ այն մարդուն, որը իմ զինւորներիս նահատակեց և ձեռքիցս տարաւ իմ անձիս հարեմին զարդ լինող մի աղջիկ... սպանողը ձեզնից էր, որ էլ խայտառակութիւն ու լրբութիւն չը մնաց արիք, գնացէ՛ք, ձեզ երկու ժամ ժամանակ եմ տալիս, որ անիրաւ մարդասպանին ինձ բերէք ձեռքերը ու ոտները կապած... իսկ առ այժմ շուտով զօրքերիս կերակուր տուէք և բանդարկուածներին էլ հրաման եմ տալիս որ ուտելու բան տաք, հայդէ՛, կորէք...

Եւ գոհ իւր խօսքերից, շփեց մորուքը, դարձաւ իւր կողքին նստած հարկահանին ու ժպտալով հարցրեց:

—Էլ բան մնա՞ց ասելու...

— Ձերդ մեծութիւնը խօսեց բոլորը - ասաց հարկահանը— միայն թէ մոռացաւ ասելու, որ պէտք է մեր ձիերին էլ գարի տան...

—Լսեցի՞ք, գեաւուրներ...

Խամփաները ոտքի ելան, խորը գլուխ տուին և հեռացան դէպի Զիւինի լեռները բարձրացող լայն ճանապարհի մօտ:

Զանգաղ գիւղը շինուած է Բասէնի ուղղակի այն ծայրին, որտեղից ճանապարհը սկսում է բարձրանալ դէպի Զիւինը. մի փոքրիկ գետակ գալիս կտրում է գիւղի առջևը և անցնում խառնւում է Հասան Ղալայի գետակին:

Գիւղի խրճիթները ճանապարհի մօտից միմեանց կպած սփռւում են լերան կուրծքի վերայ և այդ խրճիթներից ամենասիրունը, մեր պատմութեան ժամանակ, քէհեայի խրճիթն էր: Քէհեան ինքը մի քառասնամեայ գեր մարդ էր, ունէր 100-ի մօտ տաւար և գիւղի խամփաներից մէկն էր. Զանգաղը այդ ժամանակ ունէր չորս խամփաներ, որոնց գիւղացիք չէին սիրում, որովհետև նոքա էլ Հասան Ղալայի բէգերից պակաս անգութներ չէին:

Բայց երբ խամփաներին, 'ի թիւս որոց և քէհեային, բէգը կանչեց և մի քանիսները լսեցին բէգի սպառնալից խօսքերը, գիւղացիք լեցուեցան քէհիայի տունը և սպասում էին տեսնելու թէ խամփաները ինչ պիտի անեն:

Քէհեան գիւղացւոց հրամայեց շատ չը խոնարհելու իւր խրճիթի մէջ, տեղ ցոյց տուաւ ընկերակիցներին, լցրեց չիբուխը և պահ մի բոլորն էլ ծխել սկսեցին:

—Է՛հ, Խաչօ քէհի՛ա, ասաց վերջապէս խամփաներից մէկը—մեր էջելը [1]) եկել է, ժամանակ շատ չ՝ունինք, կանչենք Տէր Եղիշէին, խոստովանուենք և հաղորդուենք...

—Ի՝հարկէ, վերայ տաւ երկրորդը—մեզ կը խորովեն, որովհետև ո՞վ գիտէ, ինչ տեսակ մի չափողը՝ն [2]) սպանել է այդ անօրէնի զինուորներին... էլ չի մտածում թէ զանզաղցիք ի՞նչ գործ ունէին Զիւինի դիւզի վերայ... այսպէս է... Կարօն կը սպանի, Վարդանը կը տուժի...

—Աղանե՛ր, խօսեց քէհեան բերնից մի թանձր ծուխ արձակելով—մեզ մէկ ճար է մնում, կամ թողնել փախչել և կամ մեզնից մէկին զոհ տալ՝ միւս՝ներին ազատելու համար: Տղե՛րք, դարձաւ նա գիւղացւոց, եկէ՛ք, Աստուածը մի՛ ուրացէք, եթէ ձեր մէջն է բէգի զինուորներին սպանողը, բռնէք բերէք մեզ, անմեղ ձեր իշխանների արիւնը մի մտնէք...

—Ինչե՛ր ես խօսում, քէհեա՛, գոչեց մի գիւղացի,—դու լաւ գիտես որ մեզնից չէ եղել սպանողը, չը լինի՞ ուզում ես որ մեզնից մէկին զոհ տանք ձեր կաշի համար:

—Ճիշտ է ասում Գաբօն, ասաց մի ծերունի խամփա,—մենք լաւ գիտենք որ սպանողը Զանզաղից չէ. մենք էլ ծեր մարդիկ ենք ի՞նչ օրէնքով մի ջահիլ

[1]) Օրնաւ։
[2]) Սրիկայ, անառակ։

գայ մեզ համար զոհելի... վեր կացէք, տէրտէրին կանչէք խոստովանուենք, հալբէթ Աստուած մեր մեղքերի համար այսպիսի մահով է մեզ մեռցնում... ճակատագի՛ր... աղանե՛ր, ճակատագիր... մեր ճակատի վերայ գրուած է եղել, որ խորոված ենք լինելու... ո՞վ կարող է ճակատի գրածը ջնջել:

—Ամենքն էլ քեզ նման խռփած չեն... մմմրուաց քէհեան յուսահատ, բայց որքան որ կամաց խօսեց, ծերունի խամփան կարողացաւ լսել:

—Իրաւունք ունի՛ս, ասաց նա—դու դեռ ջահել ես, փա՛ռք Աստուծոյ, քէօհլան ձիերդ շատ ունիս, վեր կա՛ց, մէկի վերայ նստիր ու փախիր, թող մենք զոհենք, մենք արդէն ծերացել ենք:

—Ա՛ֆ կընես, գոչեց մի ուրիշ խամփա—ես սկի էլ չեմ ուզում խորովել... ես էլ կը փախչեմ:

—Փախի՛ր, ասաց քէհեան—փախիր և կնիկդ ու աղջիկներդ թող խորովեն քո փոխարէն...

Խամփան գլուխը ծռեց և չը պատասխանեց:

—Հը՛, ծիծաղեց քէհեան—ինչո՞ւ չես փախչում, վե՛ր կաց, իմ ձիերիս մէկն էլ քեզ փէշքէշ, իմ հրացանս էլ առ ու գնա՛... եթէ կարող ես, եթէ սիրտդ տանում է որ կնոջդ խորովեն, աղջիկներիդ էլ բէգը կամ զինուորները պղծեն, համեցէ՛ք... ուսի հողը շատ հեռու չէ, մինչև առաւօտ այնտեղ կը հասնես և կ՝ազատուես... է՛հ, որ փախչել կարողանայինք, առաջինը ես կը լինէի...

—Չէ՛, խօսեց չորրորդ խամփան—ձեզնից ոչ ոք

էլ չի կարող փախնել... ելէք գնանք խոստովանելու...

Յանկարծ խրճիթի դուռը ուժգնութեամբ բացուեց և այնտեղից ներս մտաւ մի երիտասարդ։

Նա երկարահասակ, լիքը գեղեցիկ դէմքով, երկար մօրուքով, սրածայր մեծ ընչացքով մէկն էր, սուրը գօտիից, մի երկար սուր ուսերից, հրացանը ձեռն, բէլօլէրը կողքին, գլխին ֆէս, ոտքերին երկար կօշիկ և աջ ձեռքում արծաթեայ կոթով մի մտրակ, որով նա յուզմամբ ծեծում էր երկար կօշիկի պարանոցը։ /

Նա մտաւ, դէմքը կնճռած բոլորին նայեց, մօտեցաւ քէհեային և խրոխտ ձայնով գոչեց՝

—Բարև՛, Խաչօ քէհեա՛...

Քէհեան ապշած նրան նայեց. բոլորն էլ զարմացած մնացել էին, որովհետև մի քանի տարի էր, որ չէին տեսել Նոքա այդպէս զինուած մէկին։

—Վա՛հ, գոչեց քէհեան—դու հա՞յ ես, ո՞վ ես որ չեմ կարողանում ճանաչել.

—Հը, Գէորգին մոռացե՞լ ես, որ քեզ Համիդ աղայի ծեծից ազատեց Հառամիների գիւղի մէջ։

—Վա՛յ բարև, Գէորգ աղա՛, աչքներիս վերայ, գլուխներիս վերայ եկար... համեցէք, համեցէ՛ք։

—Լա՛ւ, գոչեց Գէորգը—ես կը նստեմ, բայց այս տղաներից մէկին ասա, որ ձիուս տանեն ախոռը և առջևը դարի լցնեն...

Գիւղացիներից մէկը դուրս թռաւ խրճիթից։

—Է՛, ասաց Գէորգը նստելով և Մարթինի հրացանը ծնկների մէջ առնելով—այս ի՞նչ էք անում այստեղ, երևի պատրաստւում էք խոստովանելու... հայ էք ի հարկէ, հենց որ բարկացան ձեզ վերայ, իսկոյն գլուխներդ քաշում ու եկեղեցին էք վազում... տօ՛, դեռ ո՞ւր է ձեր խոստովանելու ժամը, ի՞նչ է, խօ չէք փթել—100 տարեկան դարձել... այդ բէգը իւր քսան զինուորներով կարողացա՞ւ սաղ գիւղին վախեցնել... ամօ՛թ, ամօ՛թ, արժանի չէք ո՛չ մի բանի, ոչ մի գթութեան...

Եւ նա բորբոքած վեր թռաւ, հանեց բէլօլէրը, ոտը քաշեց և դուռաց կատաղութեամբ։

—Ձեզ բէգը պիտի խորովի, ուրեմն աւելի լաւ չէ՞, որ մի քրիստոնէի ձեռքով սատկէք...

—Գէորգ աղա՛, գոչեցին վախեցած խամփաները վեր թռչելով. քեզի զուրբա՛ն, մեղքի մէջ մի մտնիլ, ընտանիքների որբ մի թողնիլ, խնայի՛ր...

Գէորգը ետ քաշեց բէլօլէրը, մի քրքիջ արձակեց և ասաց ծիծաղելով։

—Տօ՛, ախմախնե՛ր, ինչո՞ւ եմ մեղքի մէջ մտնելու, միևնոյն չէ՞, ահա՛, ես խղճացի, բայց բէ՞գն էլ քրիստոնեայ է, նա էլ կը խղճա՞յ...

—Է՛հ, է՛հ, ասաց ծերունի խամփան—ջահիլ-ջահիլ խօսում ես, չը գիտե՞ս որ բէգը կերթայ ու հարիւր զինուոր կը բերէ մեզ ջարդ ու փշուր կանի...

—Ձա՛յնդ... խռփած մո՛ւկ, ինչո՞ւ չես փախչում մի ծակ մտնո՛ւմ, կորի՛ր, գնա սատկիր քեզ

համար, թող որ ուրիշները ապրին... մինչև որ բէգը Հասան Ղալայ կարողանայ երթալ, ես նորա կտրած գլխով պիտի փշրեմ քո ցանցառ գլուխդ... դէ՛հ, դարձաւ նա գիւղացիներին — մի՛ լսէք այս խուփաձին, որ եգուց էլօր մեռնելու է, դուք ջահիլ էք դեռ, դեռ էս շատ տարիներ ունիք ապրելու, բայց եթէ մտադիր էք այսպէս ապրելու, սատկէք բոլորդ է՛լ, ա՛յ, էսօր ձեզ կը խորովեն, եգուց ձեզ կը կտրատեն, ձեր կնիկները կը տանեն...

Եւ բացւեց նորէն խրճիթի դուռը. այս անգամ ներս մտնողն էր մի պարթև կին ցուպը ուսին դրած։

Խաթ-Սաբան էր, փոշոտ, կեղտոտ, միակ աչքը արիւնով լեցւած։ Նա յառաջացաւ, ցուպը ցած առաւ, իւր հեռը մտնող գամիռին աքացիով վռնդեց տաերի մօտից, նստաւ պատի մօտ և երբ Գէորգը գոչում էր.

— Այո՛, ձեզ բոլորիդ էլ կը սպանեն, կը խորովեն...

Խաթ-Սաբան վեր թռաւ տեղից, բարձրացրեց ցուպը և խռպոտ ձայնով գոռաց.

— Նահլաւ սիսորովի [1]) նահլա՛ւ, նահլա՛ւ...

Եւ իւր միակ աչքը կատաղութեամբ բևեռեց Գէորգի վերայ..։

---

[1]) Կրա՛կ տանը, կրա՛կ, կրա՛կ...

ԺԲ.

ԲԷԳԻ ՀԱՇԻՒՆԵՐԸ

— Ուրեմն բոլորը 675 հոգի՞ են։

— Այո՛, դրանից 100 մանր են, սկսած 1 տարեկանից մինչև 16 տարեկան։.. 675 վերայ դեռ չեն հաշւած ծերունիները...

— Իսկ նրա՞նք որքան են։

Հարկահանը թերթեց տետրակը, մատով սկսեց հաշւել և ասաց.

— Մի խօսքով գիւղի մէջ աւելի քան 700 անձ կայ...

Այս խօսակցութիւնը պատահում էր գետի եզերքում կանգնեցրած բէգի վրանի մէջ. բէգը թիկն տւել բարձին ծխում էր, գրագիրը թուղթը ծնկան վերայ ծալած, գրիչը ականջի ետև՝ ուշադրութեամբ լսում, իսկ հարկահանը մի մեծ տետրակ ծնկների վերայ՝ հաշւում էր։

Մի ձիթի ճրագ դրւած ճրագկալի վերայ, աղօտ լոյս էր սփռում վրանի մէջ. վրանի դրսումը ցցւած էին եռանկիւնաձև չորս հրացաններ և նորանից ոչ հեռու խոտերի վերայ փռւած երգում էին և խօսում բէգի զինուորները։

— 700 ա՛նձ, խօսեց բէգը — բայց դրանից քանիսնե՞րն են աշխատաւորներ։

— Շուրջ 500 հոգի, եթէ հաշւենք կանայքն էլ.

— Ի հարկէ պիտի հաշւել, կանայք մարդկանցից

լաւ են աշխատում... լա՛ւ, գրագի՛ր, դարձաւ բէգը նրան—այժմ հաշուիր թէ տարեկան որչափ նիւ-ֆիւս [1]) է տալիս Զանգաղ գիւղը։

—Ձերդ մեծութիւն, մէջ մտաւ հարկահանը—աւելորդ է հաշուել, այստեղ ես ունիմ հաշուած, ահա... Զանգաղը տարեկան միայն բէթէլէթ [2]) է տալիս 8000 ղուրուշ... իսկ հողի, տաւարների և այլն տուրքերն էլ միասին, կազմում է մի լաւ գումար։

—Որքա՞ն։

—18000 ղուրուշ։

—Ը՛հը՛, լաւ փող է... շուրջ 180 ոսկի...

—Ալլահ իւչիւն [3]), ինչո՞ւ ուրանալ, Բասէնը բոլոր միւս գաւառներից լաւ եկամուտ է տալիս, անցեալ տարի մօտ 3—4000 ոսկի ժողովել եմ... չէ՛, ես Բասէնից չեմ հեռանալ, բասէնի ժողովուրդը այժմ խեղճացել է, լաւ եկամուտ է տալիս ինձ։

—Ճշմարիտ էք հրամայում, ասաց գրագիրը—Բասէնի կանայքն էլ սիրուն են... ա՛յ, այդ անպիտան բոշայի աղջիկը, հիւրի-փէրի էր...

—Ինչ լաւ պատառ կը լինէր Ձերդ մեծութիւնը,

[1]) Անձնական տուրք։

[2]) Ջինսորական տուրք։

[3]) Բառ առ բառ նշանակում է «Աստծոյ համար», բայց ոճ է դա, որ նշանակում է «ճիշտը պիտի ասել»—նման «Աստուած վկայ» ոճին։

դիտեց հարկահանը—ափսոս որ ձեռքիցդ ելաւ։

—Հա՛, ափսո՛ս, ասաց բէգը—բայց հոգ չէ՛, երէկ այստեղ էլ մի սիրունը տեսայ, բոշայից պակասը չէր, այս ի՞նչ ձայն է...

Նա միջահատեց խօսքը և գլուխը դարձրեց-վրանի եռևից մի խշրտոց էր լսվում։

—Գիւղի շներիցը կը լինի, ասաց հարկահանը—հա՛, ես էլ համակարծիք եմ ձերդ մեծութեան, վէգիր-վիւզարան [1]) էլ մեզ նման քէֆեր չի վայելում... է՛հ, ձեզ հաճելի չը թուղ կանանցից էլ մեզ բաժին է ընկնում... շնորհակալ ենք և աղօթողս...

—Է՛հ, այս շունը սկսում է վրանը մտնել, ասաց գրագիրը ետ նայելով—երևի մսի հոտ է առել։

—Հո՛շտ... գոռաց բէգը ետ դառնալով. ձայնը դադարեց։

—Դուրս գնաց երևի, ասաց գրագիրը—ես էլ համամիտ եմ էֆէնդիին, մենք մեղաւորներս էլ քէֆեր ենք անում երբեմն...

—Դո՞ւ, ծիծաղեց բէգը—ամենից լաւ քէֆը դու ես անում, միտդ է թէ ինչպէս անցեալ ամիսներում Ամրագոմի մէջ մի աղջկայ ձեռք էիր ձգել, երբ ես անցնում էի թփերի մօտից, աղջիկը գոռում էր, իսկ դու ասում էիր հսո՛ւս, ես քեզ ոսկի կը տամ... երևի ոսկիներ շատ ունիս...

[1]) Մեծամեծներ, նախարարներ։

—Ձեր շնորհիւը... բայց այս շունը նորից ներս է մտել, հո՛շտ—օ՛շտ... կորսուի՛ր, անպիտա՛ն շուն...

—Կարծում է թէ մի՞ս է մնացել, օշտ, գոռաց հարկահանը.

—Ձեր շնորհիւը, շարունակեց գրագիրը—մենք էլ ունենում ենք այդ «դեղին Աստուածից»...

—Հա՛, հա՛, հա՛, ծիծաղեց բէգը-նրա համար այդչափ դեղնել ես...

—Իրա՛ւ, իրա՛ւ, գոչեց հարկահանը—խիստ դեղնել է...

—Դու էլ սկսում ես դեղնել, ժպտեց գրագիրը—վա՛յ անիծածը էլի մտա՛ւ, օ՛շտ, օ՛շտ... գեաւո՛ւր, օշտ...

Յանկարծ մի ձեռք երևեցաւ մթան մէջ, փայլեց մի դաշոյն։

Մի բոպէ և աղմուկը բարձրացաւ, զինուորները ոտքի թռան և երբ գրագիրը ու հարկահանը կռացել էին ընկնողի վերայ, լսեցաւ մի խռպոտ ձայն, որը գոռում էր մթան մէջ։

—Նահլա՛ւ սիսորովի, նահլա՛ւ, նահլա՛ւ։

Եւ մի խումբ հրացան արձակելով մտան վրանները, բարձրացաւ աղմուկ, հրացանների ձայնը, սուրերի շկահիւնը, շների ոռնալը, աղմուկ, ոռնոցք, հայհոյանք խառնուեցին միմիանց, ձէթի ճրագների լոյսով միայն երևում էին մի տատանուող, ելնող իջնող ահագին ցուպ, սուրեր և հրացանի փողեր...

երբեմն միայն երևում էր նաև Խաթ-Սաբայի երկար հասակը, իսկ Գէորգի ռէվոլվերի ձայնը թնդացնում էր ձորը։

—Խփէ՛ք, տղե՛րք, գոռում էր նա։

—Ալէ՛ք, Ալէ՛ք, որոտում էր Խաթ-Սաբան—Նահլա՛ւ... Եւ «նահլաւ» սկսեց երևալ, վրանները վառվում էին, մէջ տեղը շփրտուած մի խոտի դէզ սկսեց բոցեր արձակել...

Կրակի լոյսով այս անգամ երևեցան ցուպերով, դանակներով, հրացանով և տապարներով զինուած գիւղացիներ, որոնք երեք խումբերի բաժանուած՝ ամէն կողմից յարձակում էին գործել վրանի վերայ։ Մի խումբին առաջնորդում էր կանցի Ալէքը մի ահագին կեռ սուր ձեռքին. Խաթ-Սաբան իւր ցուպով գանգեր ջարդելով և իւր խռպոտ ձայնով «նահլա՛վ» գոռալով վազում էր դէպի վրանը.

—Խփէ՛ք, տղերք...

Թէ ինչպէս էին այդ երեք մարդիկ հանդիպել միմիանց, դա շատ երկար չէ. Խաթ-Սաբան էրզրումում Գրիգոր աղայի մօտ հանդիպել էր Գէորգին, որը Խաթ-Սաբային ուշադրութեամբ լսելուց յետոյ, ասաց։

—Գնա՛նք, մայրիկ, ես պիտի կռւեմ այն ցեղի համար, որ քեզ պէս մի քաջ գլխաւոր ունի։

—Եւ հեծել էր ձին ու Զիւինի դիւղն էին գնում։ Արտօսի մօտ Ալէքը հանդիպեց նոցա, ամէն ինչ պատմեց և երբ մտածում էր թէ ի՞նչ պիտի

անել, Գէորգը մօտեցել էր նրան և յանկարծ հարցրել.

— Դու կանցի Ալէքը չե՞ս...

Եւ նոքա եկել էին, համոզել գիւղացւոց և յարձակում գործել բէգի և զինուորների վերայ...

Երբ լուսացաւ, Զանգազի գետի եզերքին դեռ ևս մնում էին խոտի դէզը և վրանի սիւները, իսկ նոցա մօտ ընկած էին արիւնի լճակների մէջ բէգի, դրագրի, հարկահանի և տասն և երեք զինուորների դիակներ...

Եօթ զինուոր կարողացել էին անյետանալ։

—Տղե՛րք, ասաց Գէորգը ուրուրթեամբ—լուրը Հասան-ղալա հասաւ, էգուց Զանգազը կը պաշարեն...

ԺԳ.

Փ Ի Ր

Սրանից մի քանի տարի առաջ մի հայ ճանապարհորդ, որը շրջում էր Թորթում գաւառում, մի գիշեր հիւրընկալուեցաւ մի բլրակի գլխին գտնուող հայ բոշաների վրաններում։

Հայ բոշաները, որովհետև ամառ էր, թողել էին իրանց գիւղը և 40-ի չափ վրաններ էին կանգնեցրել այդտեղ։ Ճանապարհորդին կերցրին, յետոյ յայտնեցին, որ իրանց գիւղապետի վրանի մօտ ամէն երեկոյ մի հեքիաթ ասող գեղեցիկ հեքիաթներ է պատմում և հրաւիրեցին նորան, եթէ կուզէր, լսելու պատմողին։

Այնտեղ, գիւղապետի վրանի առջև խոտերի վերայ փռուած շրջան էին կազմել բոլոր բոշաները, նստեցրել էին մէջ տեղ մի բոշայի և պատրաստում էին լսելու նորան։

Փչում էր մի զով քամի. երկինքը պարզ էր և լուսինը պայծառ լուսաւորում էր, հեռուում տաւարների պահապանը երբեմն երբեմն շուացնում էր և պլպլացնում իւր չիբուխի կրակը, ցածում խոխոջում էր գետակը, իսկ իրանք բոշաները մէջքի վերայ պառկած կամ թիկն տուած ծխում էին... վրաններին ներսում փայլում էին աղօտ լոյսեր, երբեմն ճչում էր մի մանուկ, իսկ կանայք մեղմութեամբ միմեանց վրան էին մտնում և շները խոտերի մէջ խշրտոց հանում։

Ճանապարհորդին տեղ տուին գիւղապետի մօտ. դա մի հասակաւոր անձ էր թաւ մօրուքով և թուխ դէմքով. պարզեց ճանապարհորդին իւր չիբուխը, յետոյ դարձաւ մէջ տեղը նստած պատմողին և ասաց հայերէն։

—Մելի՛ք, ա՛ մելիք, գոչեց գիւղապետը—աւելի լաւ կանես որ սրան Փիրի պատմութիւնը պատմես, գիտե՞ս, էֆէ՛նդի, դարձաւ նա ճանապարհորդին-Փիրի հեքիաթը շա՛տ լաւ հեքիաթ է, բայց ո՛չ ոք կարող է մեր Մելիքի պէս լաւ պատմել...

—Քէհեա՛, ասաց մի բոշա—Գրիգորը փող չ՚ածի՞ պար գանք։

—Տօ՛ հա՛, հա՛, ասաց քէհեա՛ն—դէ՛, Գրիգո՛ր,

վեր առ փողդ, էֆէնդի, Գրիգորը լաւ փող է ածում, մերոնք էլ պար են գալիս... Հայդէ՛, տղե՛ր, վեր կացէք...

Եւ սկսեց ածել մի վայրենի եղանակ սուր ելևէջներով, իսկ պարողը պարզեց թևերը· ոտները ծուռը դրած սկսեց թռչկոտել և աւելի վայրենի մի պար պարել, որից յետոյ երեք-չորս հոգի շրջապատեցին նրան և սկսեց խմբական տարօրինակ պարեր. նստածները երգում էին. ի՛նչ երգ... փողը ածում էր մի արագ չափերով և զիլ ձայներով կտոր, հետզհետէ իջեցնում էր մինչև 8 աստիճան ցածր և երբ նորից օգտագործ էր թռչում, խումբը ցած ձայնով երգում էր նրա հետ. այդ կտորը նմանում էր արաբական «վա՛յ դիլէմ» երգի կտորին։

Յետոյ յանկարծ մի երիտասարդ նստաւ փող ածողի մօտ, հազաց և սկսեց երգել։

Միրէվի, միրէվի թա բը ասբր [1])
մի միրէմ [2])
Եւ փողը ածեց ու երիտասարդը շարունակեց
ամա՛ն դիլէմ [3])
Իսկ խումբը մնչեց
վա՛յ դիլէմ... [4])

---

[1]) Գնում ես, գնում ես մինչև երեկոյ։
[2]) Մեռնում եմ։
[3]) Վա՛յ սիրտս։
[4]) Վայ սիրտս։

Արաբական երգն էին երգում, բայց որչա՛փ այլանդակած և ի՛նչ խուժատուժ պար էր, ի՛նչ ցատկուտուքներ, ի՛նչ ոստոստումներ, ի՛նչ քայլեր։

Երբ արաբական երգն էլ վերջացաւ, բոշայի մէկը եկաւ նստելու ածողի մօտ, հազաց. մի բան ասաց ածողին և բարձր ու բարակ ձայնով երգեց բոշայական մի երգ.

Եւ վերջացրին երգը մի կատաղի ձայնով «Ա՛խ լէվալ, [1]) լէվա՛լ, լէվա՛լ» խօսքերով...

Երբ լռեցին, բոլորն էլ տխուր էին, շատերը «ախ» քաշեցին, գիւղապետը դէմքը կնճռած լսում էր և ճանապարհորդը բոշաների հետ դեռ ևս երկար չը կարողացաւ երգի թողած տխուր տպաւորութեան տակից դուրս գալ...

Հինգ րոպէի չափ լռութեամբ ծխեցին բոլորը, յետոյ գիւղապետը շարժուեցաւ տեղից և դառնալով Մելիքին.

—Մելի՛ք, ասաց—պատմիր «Փիր»-ի պատմութիւնը։

Մելիքը եկաւ մէջ տեղ նստելու, հազաց նորից, բոլորին մէկ մէկ նայեց, ժպտեց ճանապարհորդին և նորան ուղղելով խօսքերը սկսեց։

«Այնտեղ Զիւինի սարերի վերայ, պատմեց նա—մի վայրենի վարդենիի մեծ թուփ կայ, որը տարին մի անգամ տալիս է սպիտակ բաղմաթիւ անուշահոտ

---

[1]) Հայ բոշայի լեզուով նշանակում է «Ատուած»։

վարդեր, բայց ճիւղերը աւելի թանգագին և աւելի լաւ վարդերով են զարդարուած...

Իւրաքանչիւր լոմ, իւրաքանչիւր հայ (այժմ սկսել են նաև իւրաքանչիւր այլազգ) այդ ծառի մօտից անցնելու ժամանակ, պահ մի նստում է նորա հովանիի տակ, յետոյ կտրում է իւր հագուստից մի կտոր, փաթաթում է նորա ճիւղերին, աղօթում է և յետոյ հեռանում...

Դա «Փիր»-ի գերեզմանն է. այստեղ թաղուած է մի կին, մի քաջ, մի խելօք կին և իւրաքանչիւր լոմ, երբ հանդիպում է այդ քարակոյտներից կազմուած գերեզմանին և կամ հեռուից տեսնում է նորա վերայ բուսած այդ վարդենին, չէ կարողանում չը յիշել «Փիր»-ին.. լոմերի քաջ գիւղապետուհուն, հրաշալի լոմ-Հասանի կնոջ՝ իմաստուն Խաթ-Սաբային...

Քաջ էր Խաթ-Սաբան, իմաստուն էր նա, նորա պէս կին դեռ չի ծնել աշխարհի մէջ և բոլորը այլ և նրան կոչում են «Փիր» [1]։

Հեռու Աջեմիստանից եկաւ լոմ-Հասանը իւր ցեղի հետ, մի կուրի մէջ վերջին անգամ կոտորեց 101 քիւրդ և երբ մեռաւ, Խաթ-Սաբան էր, որ ցեղապետ եղաւ լոմերի վերայ, որոնց նա կառավարում էր իմաստութեամբ. նա քանի անգամ ազատեց իւր ցեղին կոտորից, քանի անգամ աշխատեց թափառականութիւնից ազատուել, դիմեց փաշային,

[1]) Սուրբ։

դիմեց սուլթանին, բայց այս երկրի մէջ այժից բացի ուրիշ միջոց ի գործ դնել անկարելի է... և Խաթ-Սաբան այժ էլ գործ դրեց։

Եւ գնաց նա Էրզրում, գտաւ երկու հայ, եկաւ Զանգազ, կոտորեց զինուորներին, կրակ տուաւ նրանց վրանները, սպանեց Հասան-ղալայի ղազան բէգին...

Փաշան զօրք ուղարկեց գիւղի վերայ. զօրքը կրակ տուաւ գիւղը և Խաթ-Սաբան քաշեց իւր ցուպը, կոտորեց 100-ից աւելի զինուոր, գիւղացւոց բոլորին էլ ազատեց, նրանց առաջն ընկաւ տարաւ ռուսի հողը։

Զօրքը ընկաւ նորա ետևից. Խաթ-Սաբան անցաւ Հառամի գիւղից, քարուքանդ արաւ և բարձրացաւ լեռները։

Երբ Զիւինի գլուխն էր հասել, արդէն ճանապարհին թողել էր իւր խումբից շատերին, սակայն իրան հետևող զօրքը կէս էր եղել։

Եւ գիշերեց խումբը Զիւինի գլխին, Խաթ-Սաբան այդ գիշեր երազ էր տեսել, որ լոմ-Հասանը կանչում էր իրան։ Նա զգաց որ մեռնելու էր, կանչեց աղջկան, բռնեց նորա ձեռքը, տուաւ Կանցի Ալէքին, օրհնեց և ասաց.

—Հող ունենա՛ք, իմ որդինե՛ր...

Կանչեց լոմերին, խրատեց նրանց և ասաց.

—Հող ունեցէ՛ք, զաւակներս—ձեր փրկութեան և հանգստութեան միջոցը հողն է...

Դիշերը յանկարծ զօրքերը պաշարեցին խումբին.

Խաթ-Սաբան վերցրեց ցուպը և ընկաւ նրանց մէջ, իւր չորս կողմը դիակներ փռեց և երբ զօրքերը յետ էին փախչում և խումբը մնում էր ռուսի հողը՝ Խաթ-Սաբան վերջ ստացաւ կուրծքից...

Կէս գիշերին Խաթ-Սաբան մեռնում էր. կանչեց նորէն բոլոր լոմերին և երբ հաւաքուել էին, նա բարձրացաւ տեղից, բոլորին մէկ մէկ օրհնեց և ասաց կրկին.

—Հող ունեցէք...

Եւ մեռաւ «հող» բառը բերանին...

Լոմերը թաղեցին նրան մի բլրակի ստորոտում. Օգիշուն պոկեց ուրիշ տեղից մի վարդի թփիկ և տնկեց նորա գերեզմանի վերայ, լոմերը իրանց շորերից մի մի կտոր կապեցին նորա ճիւղերին, լացին իրանց հերոսուհու վերայ...

Եւ գնացին...

Անցա՛ն տարիներ, Խաթ-Սաբայի իւրաքանչիւր քաջութիւնը մի մի հեքիաթի նիւթ դարձան, որը ես ձեզ պիտի պատմեմ միշտ, կը պատմի իմ որդին, կը պատմի իմ թոռը, կը պատմի իւրաքանչիւր լոմ.. նորա դէստէնը [1]) կ'երգի իւրաքանչիւր շաիր [2]), իւրաքանչիւր լոմի մանուկ, կ'երգի Գրիգորը, կ'երգեն քարերը, իսկ այժմ էլ իւր քաղցր ձայնով կ'երգի

[1]) Երգի մի տեսակ է, որ գովում է մասնաւոր քաջ անձերի

[2]) Բանաստեղծ։

Սարկոն, կը լսեն լոմերը եվ կը պարծենան ու կը պատմեն իրանց աղջիկներին, կը լսեմ եվ ես, ձեր ծերունի հեքիաթ պատմող եվ կը ցնծամ

Եւ լռեց Սելիքը Սարկոն, որը մի լաւ ձայն ունէր, մոտեցաւ Գիկորին եվ նստեց

Չուում էր գոմ քամին, փայլում էր լուսինը, հոմիւը պլպլացնում էր իւր չիբուխի կրակը, հեռում խոխոջում էր գետակը, խշխշում էին խոտերը

Սարկոն սկսեց, նորա ձայնը հնչում էր արպէս տաւիզ, դողում էր որպէս լար եվ խոսքերը արտասանում էր այնպէս մեղմ, որ սարսուռ էր ազդում:

Նա երգում էր:

Զիւինի թուփ, ղուրբան վարդիդ

Ով կը հասնի քո փառքիդ

Թող, որ նախանձեմ արմատիդ

Փչում էր քամին, փայլում էր լուսինը, խոխոջում էր գետակը, խշխշում էին խոտերը եվ խումբը զորեղ ձայնով ու ղեմքը Զիւինի լեռներին գարձրած երգում էր։

Զիւինի թուփ, ղուրբան վարդիդ

Ղուրբան ,,Փիր,, ին ճաճկոդ հոդիդ

18940

2013